

ISSN 1829-2003



ՀԱՅԿԱՆԻ ՏԻՐԱՊՈԽ ՄԱՍԻՆ ԱՐԵՎԱԿԱՆ ԳԻՒՆԱԳԱՐ  
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

VARDZK  
DUTY OF SOUL

N 17

2022





to 1

Գրիգորիս Եպիսկոպոս Աղվանեանց  
ՓՈԽԱՌՈՂԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ Ի ՎԻճԱԿԻՆ  
ԳԱՆՉԱԿՈՒ




to 11

Րաֆֆի Քորթոջյան  
ԱԲՈՒՂԱՄՐԵՆՑ ԱԲ. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԻՍԱԳՐԵՐԸ



to 33

Էմմա Աքրահամյան  
ՍՈՎԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՅՐԱՎԱՐԻ  
ՎԻՍԱԳՐԵՐԻՑ ՄԵԿՈՒՄ



to 44

Արմեն Հարությունյան  
ԶՈՒՏ ՆԱՀԱՏԱԿԻ ՆՈՐԱՐԱՋԸ ՏԱՊԱՆԱԳԻՐԸ  
ԴՍԵՐԻ ԲԱՐՁՐԱԳԵՎ ԱԲ. ԳՐԻԳՈՐ ՎԱՆՉՈՒՄ



to 46

Րաֆֆի Քորթոջյան  
ՓՐԿՎԱԾ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ՅՈՇՈՏՎԱԾ ՄՇԱԿՈՒՅԹԻՑ




to 52

Սամվել Կարապետյան  
ՈՒՃԱԳՐԱԿ ՏԱՊԱՆԱԳԵՐ ԴՁԼԱՐԻՑ



to 55

Էմմա Աքրահամյան  
ՔՅՈՒՐԱԹԱՐ



to 56



N 17 2022

## ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ

EDITORIAL BOARD

ԷՄՄԱ ԱՔՐԱՀԱՄՅԱՆ

EMMA ABRAHAMIAN

ՐԱՖՖԻ ՔՈՐԹՈՋՅԱՆ

RAFFI KORTOSHIAN

ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

HASMIK HOVHANNISSION

ՀԱՄԱԿԱՐԳՈՎԱՆԻ ՉԵՎԱՆՈՐՈՂՆԵՐ

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԼԻԱՆԱ ՅՈՎՐՅԱՆՆԻՍՅԱՆ-ՔՈՐԹՈՋՅԱՆ

Designers

ARMEN GEVORGIAN

LIANA

HOVHANNISSION-KORTOSHIAN

ԼՐԱՎԿԱՎԱՆ ԳՈՐԾՈՒՆԵԼՈՅՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՈՒԽՈՒՆԱԿԱՐՈՂ ԴՐԱՄԱԳՐԱՄ

RESEARCH ON ARMENIAN

ARCHITECTURE FOUNDATION

Engaged in Informational Activity

ՎԿԱՅԱԿՆ N 03U089223

ՏՐՎԱԾ 13.10.2010

Certificate No. 03U089223

Given 13.10.2010

ՀԱՄԱՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱԴՐ

ՐԱՖՖԻ ՔՈՐԹՈՋՅԱՆ

Responsible for this issue

RAFFI KORTOSHIAN

ԵՐԵՎԱՆ, ԲԱՐԱԿԱՅԱՆ 24/4

Baghramian 24/4 , Yerevan, RA

<http://www.armenianarchitecture.am>

<http://www.raa.am>

✉ raayer@sci.am, raatransfer@yahoo.com

☎ ՀԵՂԻ Քայատան RAA Armenia

☎ 010 52 15 25

© ՀԱՅԿԱԿԱՆ ՑԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՈՒԽՈՒՆԱԿԱՐՈՂ ԴՐԱՄԱԳՐԱՄ

© Research on Armenian Architecture

## ՓՈԽԱՆՈՐԴԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ Ի ՎԻՇԱԿԻՆ ԳԱՆԶԱԿՈՒ

Գրիգորիս Եալսկոպոս Աղվանեանց

*Սկիզբ՝ № 15-ում և № 16-ում*

### ԻԸ Նիւղգեար<sup>113</sup>

Ամսոյ 19-ին այցելեցինք Նիւղգեար գիտը, որ կրաղկանայ 76 տուն զուտ հայ բնակիչներ՝ 301 առական, 261 իշական: Սոյն գիտացինքը 70 տարի առաջ Երևանէն զաղթեր են ի Գանձակ և այնտեղէն մի հատուած՝ 17 տուն, եկած է այս գիտ:

Գիտս ունի հարք-հաւասար սարահարքի վրայ դաշտային ընդարձակ և պատուական վարելահողեր՝ աշխատաէր հայ գիտացոյ, միայն հայ գիտացոյ գործունեութեան վայելու ասպարէզ: Մեր այցելած բոլոր գիտերու մէջ սա միայն է, որ իւր բոլոր հունձեր սայելերով կփոխադրէ գիտամէջ: Գիտս ունի Ա. Գէորգ անուամբ մի հնաշէն եկեղեցի<sup>114</sup>, որ սորա աւերակ գիտատեղիս զաղթելու միջոցին վերանորոգեր են: Թէև այժմ չունի վարժարան, բայց երբեմն ունեցեր է, որ ասուաի պէս երևացեր ու անհետացեր է:



ՆՈՒԿԶԱՐ. Սր. Գևորգ Եկեղեցին (լուս.՝ Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)

Գիտիս արևելեան հարաւակողմ՝ ճորի մէջ քարձրացած մի բլրակի կողքին, կգտնուի մի փոքրիկ աւերակ վանք՝ Ամենափելի անուամբ<sup>115</sup>, որ

հայազգի Ծերալովի կալուածքի մէջ ընկած է: Վանքի շուրջը կգտնուին միաբանութեան աւերակ խցաւտեղին, ծիրահանքի աւերակ եւ գերեզմաններ: Կպատմեն (թէ որչափ արդար է, մենք չգիտեմք) յիշեալ վանքի հիսխսային դրան կողքին՝ մի մեծ քարի վրայ, կայ եղեր ընդարձակ արձանագրութիւն, որուն մէջ կրովանդակուէր վանքապատկան անտառի և վարելահողերու յիշատակարան: Յիշեալ հայազգի Ծերալովի կասկածելով, որ այս յիշատակարան մի օր իւր ընդարձակ սահմանի մի մասը իր ձեռքէն կորզել պիտի տայ, ուստի այդ յիշատակարան անելանելի դժոխքն է իշուցեր:

Գիտիս սահմանի արևելակողմ՝ երկու վերստ հեռալորութեամբ, մի աւերակ գիտատեղի կայ, որուն գիտացիք Կուծոր (փոքրիկ) գիւղ կանուանեն, իսկ շրջակայ թուրքեր՝ Քիսուլար: Յիշեալ աւերակի մէջ կայ մի խոնարհուած եկեղեցի՝ իւր կանգուն սեղանաքարով, և եկեղեցւոյն արևելակողմ՝ գերեզմանց:



ՆՈՒԿԶԱՐ. Ամենափելի վանքը (լուս.՝ Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)

Գիտիս բնակչաց մէջ տակաւին ուսումնասիրութեան հոգի չէ մտել, ուստի և շատ դժուարութեամբ յանձնառու եղան վարժարան շինելու: Բայց ի վերջոյ սոյն շինութեան համար հոգատար յանձնաժողով ընտրեցին 4 անձինք՝ Սիմեոն Յարութիւնեան, Նահապետ Սարդարեան, Աւետիս Բաղալեան և Սարգիս Սարտիրոսեան, որոնց յանձնեցին հասարակական վճռով առաջիկայ սեպտեմբերէն սկսեալ մինչև միս սեպտեմբերի սկիզբն լրացնել վարժարանի շինութիւն՝ խոստանալով վճարել նորա վերաբերեալ բոլոր ծախսեր և այնուհետև բաժանորդագրութեամբ կալե մասն արմտիք հաւաքելով՝ վարժարանի գոյութիւնը ապահովացնել:

113 Գտնվում է Շամխորի համանուն շրջկենտրոնից 17 կմ հարավ-արևելք (Ծ. մ. բարձր է 1340-1410 մ):

114 Ծխական եկեղեցն զտնվում էր զյուղամիջում և մինչև 1989 թ. բռնագաղրդ կանգուն էր (մանրամասն տես՝ Կարապետյան Ա., Հյուսիսային Արցախ, էջ 500):

115 Սր. Ամենափելի վանքը գտնվում էր Նուկզարից մոտ 5 կմ հարավ-արևմուտք՝ միջնադարյան գյուղատեղիի հարավ-արևմտյան եզրին: 1984 թ. դեռևս պահպանվում էրն եկեղեցին և գավիրը (մանրամասն տես՝ նշվ. աշխ., էջ 500-504):



Գրիգորիս Աղվանյանցի երթուղին (քրտզ.՝ Լ. Դովիհմիսյան-Քորոշյանի, 2022 թ.)

Գիտացւոց մեծագոյն մասն զարմանալի ճարպիկութեամբ որսորդութիւն անել գիտէ, որոյ մէջ կարի արագածեոն, յաջողակ և վստահ են մարդիկ, այնպէս որ առաւտեան պահուն պատուաւոր հիւրեր ճաշի հրատիրելէն զկնի, անտառ կրիմեն՝ կամ եղնիկ, կամ նորա ճագ և կամ մի այծեամ ճաշին խորովածացու հասցնելու:

Զարմանալիները կպատմեն իրենց անվուած հրացանաձգութեան մասին: Երկու եղբայրներ, արջ որսալու դէպքին մէջ, մին հրացանով կվիրաւորէ արջը: Վէրք մահառիք չինելու համար որսն կյարձակի եղբոր վրայ և տակով կանէ անոր՝ ջարդ ու փուրդ անելու: Վտանգեալ անձն վստահութեամբ կրաջալերէ իր եղբօր, որ իր վրայ ընկած արջին հրացանով սպանէ, անկասկած լինելով, որ ինքը կազատուի նորա անվուած նշանառութեամբ: Եւ, արդարի, ճշգրտութեամբ արջն կսպանէ՝ եղբօն ազատութիւն տալով:

Գիտի եկեղեցւոյ արդ ի գանձապահ, որ մի կարճահասակ և նիհար մարդ է, 75 տարեկան, որոյ միջութիւ և զյսի մազերու մէջ առանց չափազնցութեան ճերմակ մազի խայտ չէ ընկել տակաւին, կյիշէ իր այս գիտատեղին զարթելու մանրամասն պատմութիւնը: Սոյն երեցփոխանն օր մի իր 2 շներով կյարձակի վայրի վարազին վերայ, և այնինչ շներն առ երկիրի խոյս տուած են, որով և ինքն վտանգի մէջ ընկած էր, սակայն սատանայի ճար-

պիկութեամբ կրոչի վարազի քամակի վրայ և նորա երկու ականջներ բռնելով՝ կմխուի նորա վրան և վարազի ամէն ջանքերը ի դերև հանելէն զկնի, կիրաւիրէ երկշոտ շները և կիրախուսէ նորա գաւակի մսերը պատառուել: Եւ երբ այսպիսով վարազն բաւական կտկարանայ, կքաշէ դաշոյն, վարազի փորն կմխէ և կսպանէ: Այս օրինակ քաջասրութեամբ եղնիկ, այծեամ, արջ և վարազ որսալ սոյն որսորդ գիտացւոց սովորական գործն է, իսկ գայլ սպանելն իրենց համար անօր համարելով՝ իրենց «գէլ-խեղդ» շներու պարտը և բաժին կրողուն: Սոյն քաջարի գիտացւոց պարձանք և հապարտ խօսքեր միշտ իրենց գերազանց ուժերով գազանաց հետ մարտնչելու և որսալու պատմութիւն ընելն է: Սոյն պիսի պատմութիւններ արած ժամանակը կյարեն, անմիջապէս և չոփառեցւոց քաջազործութիւնները, թէ նորս այս մասին մեզմէ աւելի ճարտար և արագածեոն են: Սոյն երկու գիտացւոց տնային և դաշտային գործիքներ, կերակուրի պղնձեղններ, ափսէններ, կապերտներ, գերանիի և մանգաղներ և այլ սոցա նմանները գիշերներս իրենց տան առջև ցան ու ցիր դուրս կմնան, ինչպէս և անասուններ, զի առակ եղած է, որ սոյն երկու գիտացւոց գողցուած ապրանքները գորերն իրենց գրպանի մէջն անզամ չեն կրնար պահել: Սոյն երկու գիտացւոց շրջապատող դրացի բուրք գիտացիններու և իրենց մէջ կոիններ յաճախակի կպատահեն, զի աւետարանի խո-



ՓԻՐ. գյուղը հարավ-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.) և Սր. Ստեփանոս եկեղեցին հյուսիս-արևմուտքից և հարավ-արևելքից (լուս.՝ Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)

հական աշակերտներ, մահմեդականաց դեմ միշտ ընչից և անձնապաշտպանութեան ձիրը կրոնեն:

Սոքա արդարե անձնապաշտպանութիւնը յարգող զիտացիներ են, զի երբ իրենց ուժին չափը ո՞չ պակաս, այլ թշնամու ուժին հաւաար կգտնան, երբէք չեն զիջաներ, իրենց բաճկոն հանողներուն թոյլ տալ, որ շապիկ ևս հանեն, ի վնաս իրենց աստանական ապրուստին:

### ԻԾ Փիր<sup>116</sup>

Ամսոյս 21-ին այցելեցինք ի Փիր զիող, ըստ թիրքաց՝ Զազիկ (Պաղենի զիող), որ շինուած է մի բարձր լեռկ քարածայի դժուարակոխ լանջի վրայ և կրաղկանայ 318 տուն զրտ հայ բնակիչներէ՝ 1464 արական, 1328 իգական: Ունի զիւս երկու եկեղեցի, մինչ է նորաշէն, զմբէթաւոր, Ս. Ստեփանոս<sup>117</sup> անուամբ, որոյ մէջն կկատարուի ժամասացութիւնն, իսկ միւսն է մի հնաշէն, փայտածածկ եկեղեցի՝ Ս. Աստուածածին<sup>118</sup> անունով, որոյ մէջն

ժամերգութիւն չեն ընեն: Գիտի մէջտեղ կայ մի ուխտատեղ՝ Ս. Գէորգ անունով, որ ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ մի հաց թխելու փոքրիկ տուն: Սոքա մէջ կայ հողով լցուած մի բոնիիր: Ուխտատեղ սորա միջի հողը կշաղախեն և մկնատամ անունով վերքի վերայ կրսեն բժշկելու: Մոնիր տան կծառայեն երկու կանայք և կվայելեն նորա արդինքը:

Գիտու ունի միդասեան ծխական վարժարան, որոյ մէջ կուսանեն 60-ի չափ աշակերտներ, որ թէն 1877 թուականէ ի վեր բացուած է<sup>119</sup>, բայց ժամասացութիւն այնքան խեղճ և ամկանոն է, որ կարծես թէ զիւսիս մէջ երբէք վարժարան ու ծայնաւոր վարժապետ եղած չինի: Վարժարանի անցեալն այն-չափ առանց հոգատարութեան մնացած է եղեր, որ այն ժամանակէն ցայսօր երկու տող գրելու համար գրիչ թոնող չէ ունեցեր: Վարժարանի շինութեան նախապատճառ և մեծ բաժին ծախը մատակարարող եղած է Զարեքայ վանից վանահայր արժ. Աստուածատոր վարդապետ Տէր-Հարութիւնեանց<sup>120</sup> և հանգուցեալ Արարատեան Աղէքսանդր վարժապե-

<sup>116</sup> Գտնվում է Դաշկեսանի համանուն շրջկենտրոնից 7 կմ հյուսիս-արևմուտք՝ Շամրոց գետի աջակողման և Արքինացորի ձախակողման վտակների միջև (ծ. մ. բարձր է 1360-1620 մ):

<sup>117</sup> Սր. Ստեփանոս եկեղեցին կառուցվել է 1849 թ. գյուղի հասարակության և տփխիսեցի Ստեփան Սիրիհմանյանցի նյութակամ աջակողությամբ (մանրամասն տեսն նշվ. աշխ., էջ 265):

<sup>118</sup> Ըստ ամենայնի՛ ԺԷ դարի կառույց է (մանրամասն տեսն նշվ. աշխ., էջ 264-265):

<sup>119</sup> Կրու էր Սր. Գևորգյան անունը: Դպրոցի շինարարական երկու արձանագրությունը մեզ է հասել Հովհաննես քահանա Խոջայանցի շնորհիվ (ՀԱՊ, ֆ. 461, գ. 1, գ. 9, թ. 187: Կարդապետյան Ս., նշվ. աշխ., էջ 263):

<sup>120</sup> Սղնախցի Աստվածատոր վարդապետ Տէր-Հարությունյանցը Գետաբեկի շրջանի Զարեք վանքի վանահայրության պաշտոնը վարել է 1875 թ.-ից մինչև սպանվելու օրը՝ 1902 թ. օգոստոսի 21-ը (մանրամասն տեսն նշվ. աշխ., էջ 116):



ՓԻՐ. Վին Փիք գյուղատեղին հարավից (լուս.՝ Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)

տը<sup>121</sup> իր ուսուցչութեամբ, բայց, ափսո՞ւ, որ քիչ միջոց վարժապետութիւն արած է այստեղ: Սորա անձնուիրութեան յիշատակ գիտացիներ զմայլ-մամբ կպատճենեն:

Գիտիս արևելեան լեռնակատարի վերայ կայ մի մատուո՛ Քարհատի խաչ անուանուած ուխտատեղի<sup>122</sup>, որոյ մէջ՝ և նահատակի գերեզման իր տապանաքարով: Սոյն ամբողջ լեռը պաղեղի հանք է և իր ներքեւ ունի դադարեալ գործարան: Կտրելու պաղեղաքար ուխտատեղոյն նօտ լինելով՝ յիշեալ ուխտատեղին Քարհատի խաչ անուանուած է:

Գիտիս հարաւակողմ՝ մի վերստ հեռաւորութեամբ, կայ Մանեղու (թերևս մատուո) անունով ուխտատեղի, որոյ ներքեւ շինուած օճախի մէջ խունկ ու մոմ կվառին: Ըստ աւանդութեան բնակչաց՝ անգիր ժամանակին ի վեր եղած է ուխտատեղի: Սոյն օճախին կիովանաւորեն նոյնակս անյիշատակ ժամանակէ ի վեր երկու կաղնիներ՝ հայր և որդի անուանուած: Ասոնցմէ առաջինը, կարի հաստաբուն, չորացած ու փտած բազմաճղի, զառամած ու գոսացած լինելով, ասկէ 20 տարի առաջ, ուժգին քամիին այլևս չղիմանալով, կործանուեր է՝ բացողեայ բռնելով իր ներքեւ եղած օճախ և խաչաքարերն: Իսկ փորդի-ինչ հեռու երդու որդի կաղնին, թէ-պէտու շատ ծերացած, բայց դեռևս շատ դարերով մահուան դէմ մաքառելու յոյս կտայ, զի իր արմատներ երկարացուցած է՝ իրմէն քիչ մի հեռու ձորակի մէջ գտնուած սառնորակ և բարեհամ աղբիւրի ջրէն ծծելու, զովանալու և կենսաւորելու:

Հարաւարևմտեան կողմ՝ նոյնակս մի վերստ հեռաւորութեամբ, նոյն ձորակի ձախ ափին, կայ մի տապան-ուխտատեղի՝ Շգմաւոր անուանուած: Գիտիս բնակիները, յիշեալ տապանաքարին կից օճախ շինած, խունկ ու մոմ կվառեն և ամէն տարի՝ զատկի տօնին, մետաքսի հիւսուածքի մէջ կարմիր ձու դրած՝ կկախեն տապանաքարին հովանաւորող

թիվկի ծառի ճիւղերէն: Թէ ի՞նչ պատճառաւ այդ սովորութիւն նտած է իրենց մէջ, իրենք էլ չգիտեն:

Նոյնակս գիտիս արևելահարաւային անտառի մէջ՝ 4 վերստ հեռաւորութեամբ Զարեքայ վանքը տանող ճանապարհի վրայ, կայ ուխտատեղի մատուո իր միջի տապանաքարով՝ Պուզու-խաչ անուանուած<sup>123</sup>: Ամառնային ամպերու կայծակ սկսելու միջոցին անմիջապէս գիտէն մատաղ կտանեն յիշեալ ուխտատեղին, որ կարկուտը իրենց գիտի անդաստանի վրայէն անցնէ, ինչպէս որ այս տարի ևս այդ ուխտադրութիւն կատարելով՝ իրենց յոյս պակուեր է:

Սոյն կողման վրայ՝ գիտէն 8 վերստ հեռաւորութեամբ, կայ մի շինատեղի՝ Աղուսաշէն անունով<sup>124</sup>, ըստ բուրքաց՝ Թիւրիք-քէնդ, որոյ մէջ կան խոնարհուած եկեղեցի և գերեզմանոց:

Գիտիս արևմտակողմը՝ Շամքոր գետի աջ ափին, կայ հին շինատեղին՝ Փիք անուանեալ<sup>125</sup>: Սոյն աւերակի մէջ կայ մի կանգուն և առողջ, սագաշէն եկեղեցի, որոյ հարաւային կողմը կգտնուի մատուո՝ Քարսամ ճգնաւորի դամբարանով<sup>126</sup>, և արևմտահիւսիսի կողմը՝ բլրակի գլխին, կան երկու ուխտատեղի մատուուներ՝ Ջոյր-եղբայր:

Յուկան-նահատակ անուանուած եղբօր մատուոր<sup>127</sup> պարսպապատած է, որոյ կապալառուն ուխտաւորաց նույներէն տարին տասն բուրդի փող կտայ գիտիս ուսումնարամին: Դարձեալ հիւսիսա-

123 Գյողալ քար անվամբ հայտնի այս խաչաքարը գյուղացիները փխարեկ էին գյուղամէջ, որտեղ և պահպանվում էր մինչ բռնագաղքը: Կերտսվել է 1292 թ. (նշվ. աշխ., էջ 273):

124 Աղուսաշէնը՝ որպես ամառանոց, հիշվում է 1905 թ. քաջարի փիրեցիների՝ բուրք պավակախմբին արժանի հակահարված տալու առնությամբ (մանրամասն տե՛ս նշվ. աշխ., էջ 258):

125 Հին Փիք գյուղատեղին գտնվում է բնակավայրից 5 կմ հյուսիս-արևմտութը: Եկեղեցին, որը հայտնի էր Սր. Փեփրոնյա անվամբ, մինչև 1989 թ. բռնագաղքը գրեթե կանգուն էր (մանրամասն տե՛ս նշվ. աշխ., էջ 266-267):

126 Քարսամ ճգնաւորի մատուոր գտնվում էր վերոնշյալ եկեղեցուցու հարավ: Եկեղեց պահպանված խաչաքարերից մեկը կրել է 1457 թ. (նշվ. աշխ., էջ 268):

127 Հայտնի էր նաև Ռուկան նահատակ անվամբ (Քարխութանաց Մ., Արցախ, էջ 300):

121 Ալեքսանդր Արարատյանը դասավանդել է 1876-1878 թթ. (մանրամասն տե՛ս նշվ. աշխ., էջ 263):

122 Գտնվում էր Փիքի հարավային կողմում՝ Շիրասարի վրա (նշվ. աշխ., էջ 268):

կողմ՝ 5 վերատ հեռաւորութեամբ, կայ իին շինատե-նի՝ Սպեցիլ<sup>128</sup> անունով, որոյ մէջ կգտնուին աւե-րակ եկեղեցի և գերեզմանոց: Մամռապատ տապա-նաքարերու վրայ, խաչերէն ի զատ, հոտաղ իր եզ-ներով, մահակալ իր գործանով և այլ արհեստաւոր իր գործիքներով քանդակուած պատկերներ կտես-նուեն: Սոյն շինատեղի արևմտեան կողմ՝ մի վերատ հեռաւորութեամբ՝ բարձր սարի հարթավայրի վրայ, կգտնուի մի մատուո՛ իր միջի խաչանիշ գերեզմա-նաքարով՝ Եղրայր անուանուած: Ասորմ, թիզ մի վայր՝ դժուարամատչելի ժայռագլխին, կայ Քոյր ա-նուանեալ մատուո՛ իր գերեզմանաքարով: Եր-կուքն ի միասին Մաղրում զաղա կանուանուեն: Հին Փիր գիւղատեղոյ և Յուսկան նահատակի մէջտեղ բարձրացած բլրալանջի վրայ կայ բերդատեղի՝ Գառանտավանմբ՝ անուանեալ դալ<sup>129</sup>:

Գիւղի արևմտահարաւ կողմը՝ 6 վերատ հեռա-ւորութեամբ, Աղուսաշշէնի ջրի ծախ ափին, կայ մի սեպացեալ քարասար, որ բաղկացած է բազում խաւերէ, շերտ-շերտ իրարու վրայ գոյացած ուղղա-րերձ բարձրութեամբ: Այդ բարձրութեան մէջտեղի՝ երկու կանգնաչափ հաստութեամբ եղած շերտն փուխր լինելու համար մաշած և մէկ կանգնաչափ խոր ընկած է, որոյ վերի և վարի շերտերը, երկու շրթունքներու պէս դուրս մնալով, մի երկարաձիգ, հորիզոնական դիրքով բերան ձևացուցեր են: Այդ երկորին շրբանց կամքիթնեն մէջը 7 բնակավայրեր կան՝ փուխր բարի մէջ փորուած փորրիկ խցերու մէծութեամբ, իրարմէ հեռու, ասոնցմէ ոնանց մէջ՝ 5, ոնանց՝ 10 մարդ հազի կարող են պարունակել: Այդ բնակավայրի վերի և վարի բարձրութիւնները այն-չափ ահարկու են, որ վերուստ ի վայր նայողին սու-կումն կտիրէ: Այդ տեղէն եթէ մարդ վարի կողմը նա-յելու լինի, խելքը պտոյս կու զայ և չի կարող ինքն իրն կանգուն պահել: Խցակներու քամակի կողմը նախապէս երեք կանգնաչափ փորուած և իրա-քանչիրի առջև քարուկրով պատ շարած՝ 2 շր-թունքներ իրարու հետ միացուցեր և բնակավայր ըրած են, որոնց ամէնքն ի միասին տեղական բնա-կչներէն կանուանուի Օխտը եղցի (Եօրի եկեղեց-ոյ) քար: Պարսից և լեզգիների արշաւանքի ժամա-նակ նոցա իրաքանչիրի մէջ մի-մի գերդաստան ապաստան եղած է: Եւ այդ միջնաշերտի մի կողմ, որ հիւսիսէն արևելք դարձած է, կերկարի մինչն կէս կանգուն լայնութեան և 2 կանգնաչափ բարձրու-թեան, ճանապարհի մէջ մտնելով՝ կերթան այդ

բնակավայրեր: Մինչն չհասնեն այդ բնակավայրե-րը, նոյն բնակավայրի հակառակ կողմէն մարդ կա-րող չէ նոյն նեղ շալող դուրս գալ: Որդոյ որդի ա-ւանդութեամբ մեզ հասած կապատմեն, թէ մի հարս այդ շալող իջնալու ջուր բերելու միջոցին վարի անտառի մէջ բազուած լեզգին հրացանածգու-թեամբ ի վայր կգլորէ զիարս: Եւ թէ շալողի անցքը պահպանող երիտասարդն զնիակահարութեամբ սպանուելու և ի վայր կործանուելու միջոցին աղե-կսուոր մայրն ինքն զինք ի նոյն բարձրութենէ հուե-ցուցեր է ի վայր, և նորա մարմին քարերուն զար-նուելով քանի մը կտորի բաժնուեր է: Ահա զիտնա-լու է, թէ 30.000.000 հայի մնացորդն ինչ ահեղի մի-ջոցներով ապրեր և հասեր է մինչև մեր ծնունդ: Այս-պիսի ողբայի ազգին պահպանութեան համար ինձի պէս ողբաների արարածներ եղիսկոպոս եղած և նո-րա եկեղեցոյ տեսուչ հաստատուած են՝ ժողովուրդ կառավարելու:

Այնինչ մենք Գետաշշնու և բանանցեցւոց շինա-տեղոյ անձկութեան, հետևապէս և տներու ու փո-դոցներու խոնաւութեան, անկանոնութեան և աղտո-տութեան վրայ զարմացած էինք, այս գիւղի մէջ ա-ւելի վատքարագոյն տեսանք: Եւ սորա պատճառը մեզ կրուի, թէ հետևեալն է: Պարսից տիրապէտու-թեան ժամանակի վատքար վարչութեան երեսն յառաջ եկած արշաւանքներու, հարստահարու-թեան, գերութեան, իրոյ և սորյ, բարբարոսական ա-րարածներու պատճառաւ հայերը ճորամէջ և անփոյթ տեղեր իրանց գերեզմանոց ընտրեր են, քան թէ շինատեղի, և այս մահառիք տառապանք-ներու կենցաղավարութիւն այնչափ երկար տևեր և սովորութիւն դարձեր է շարքաջ հայերին, որ այսօր իսկ մահու և կենաց մէջ ընտրութիւն անելու զգա-ցումն անգամ կորսնցուցեր են: Եւ այն ժամանակի մոլեկոնութիւնն էլ, այդ զազանական մարմնոյ մէջ իրքը հոգի մտնալով, իրաւունք տուեր է այլակրօնի ընչից և ստացուածոց կողոպտման հետ և իգական սեռն գեղանի կանայք և աղջկունք յափշտակելով՝ Մահմեդի քարոզած արքայութիւնը այս աշխարհի մէջ էլ վայելել: Պարտուց և իրաւանց ճանաչման համար յատկացեալ արդարաքարոզ կրօնի փոխա-րէն Մահմետի Կուրան (օրինագիրը) իրաւունք տուած է իր հետևողաց այս աշխարհի մէջ իգամո-լական տոփիանը յագեցնող արքայութիւն վայելելու, հարկ եղած կենսական պիտոյքներ ևս ծեռք բերել այլակրօններէն, իսկ եթէ նորա դիմադրութիւն կա-նեն, ամիսնայողաբար փողոտել և գէշագէշ պատա-ռոտել իրամայած է, որպէսզի այսօր և ընդմիշտ գեաւուրն մահմեղականի համար և մահմեղական Աստուծոյ համար ապրեն: Տեսնելով սոյնպիսի ե-գիպտական, յանուն աստուծոյ անաստուած ա-րարթները՝ ընդրէմ մեր համազգի իրայէլարութոցն, ինչո՞ւ տօնելի Մովսէս շինել:

Ասոնք լոկ խօսքերու բարդութիւն չեն, ուշադի՛ր ընթերցող, այլ իրականութիւն, եթէ դու ևս յանձառու

128 Նաև Սավորեցիք անվանածուով հայտնի զյուղատեղիում, որը գտնվում էր Դոքյով գյուղի 2,5 կմ հարավ-արևմտուք, ոստոմ-նամակություններ են կատարել իհմնականում Մակար Բար-խուտարյանց ԺՇ դարավերջին և Սեղուակ Բարխուտարյանց ցիսավորած արշավախումքը 1960-ական թթ. (Աշխ. էջ 299-300: Դիլան հայ վիճագորյան, պր. 5, Երևան, 1982, էջ 256-257: Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, էջ 321):

129 Հայտնի էր նաև Կեռոսուանք անվանք (Քարխուտարեան Ս., Արցախ, էջ 304: Տես նաև Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, էջ 268):

լինես ամառնային շոգ ժամանակին այցելել Գանձակու գաւառի մահմեղականաց և հայոց գիտեր և ուշի ուշով քննես քո համարին եղարց դաշնադասն աղէտներու մնացեալ պատկերները, որ մենք չենք կրցեր նկարագրել՝ մեր զգացման արտայայտութիւն ընելու բառեր պակսելու համար, դու մեր զրածի բազմապատիկն պիտի տեսնաս և դու ևս անկարող պիտի լինես նկարագրել: Պիտի տեսնաս, որ հայոց տիրապետութեան ժամանակ, երբ այս կողմերը պարսիկներ չկային, բոլոր արգաւանդ արտօրէից կենտրոնի և հարքավայրերու մէջ հայ քրիստոնէի շինատեղիներ, նոցա կանգուն եկեղեցիներ և խաչքարերով լի գերեզմանոցներ, որք այժմ բոլորն էլ մահմեղականաց բնակավայրեր դարձեր են, իսկ հայերն իրենց արինաքամ եղած գերդաստանի մնացորդներ պահպանելու համար առ երկիր պարսիցն ընտրեր են խորածորերու մէջ, առիկող տեղեր բնակութիւն հաստատել՝ գագանակենցաղ լինելու: Բոլոր հայ գիտերու հետ դու պիտի տեսնաս և Փիր գիտի աւելի մահառիք շինատեղին, որոնց տներ աւելի իրարու վրայ դիզուած կիամարուին, քան թէ կողքէ կողք շինուած: Վերևի տներու մեծ մասի ճանապարհները վարի տներու տանիքներու վրայէն կանցնին:

Տներու երեք կողմի պատեր առապար կողմէն այնչափ գետնափոր և հողի մէջ բաղուած են, որ դրսի գետին և տան տանիք բոլորովին հաւասար են իրարու: Մարդ չի կարող որոշել իրարմէ երկուրի՝ գետնի և տանիքի երեսին հաւասարապէս խոտ բուսած լինելու համար: Սիայն նոցա տներու առջևի կողմէն մի փոքրիկ նեղուցած դրու կայ, որ աւելի գագանային որջի անցրի, քան մարդաբնակութեան կննանի: Տան ներսի կողմը այնչափ ի խոնաւ և մուր է, որ մահու, քան թէ կեանքի բնակավայր կիամարուի – մեղա՛յ, մեղա՛յ, շներու բոյներէն աւելի վատրաքագոյն: Անտանելի ցաւ է մեզ տեսնել կեղերիչ օսմանցոց փաշաներու և հարստահարող պարսից խաներու որորդական շներու և թշնորս բազէներու լաւ կեանք ունենալ, քան հայ քրիստոնէին: Ինչո՞ւ բոյլ տալ այդ անարդար ազգերուն, որ հազար մարդու կեանքը մի մարդու ուստել տան: Հազար մարդիկ չարաչար աշխատութեամբ իրաքանչիրն տարեկան 100 մաներով ապեն, իսկ մի մարդ շուայտութեամբ 100.000 մաներով գեղիսանայ և ծիրիք: Զառ ի վերէն զառ ի կող իշնող խոնաւութենէն տան կողըերու, գետնի և տանեաց վրայ բուսած աւելուկ, պատառուկ (քաղեղ), փիփերս (մոլոշ), բիբիսարի (աւել) և այլ խոտեր և զանազան փշեր, եթէ ունակոյսութեան ենթակայ չեն եղած, մանգաղին առատ հունա կուտան: Շինավայրին անձկութեան և առապար լինելու պատճառաւ անասնոց և մարդկանց աղքակոյսուր տներու առջև և կողքին և կամ ձորի և խորդուրդ տեղերու մէջ այնչափ դիզուած են, որ անձրևներու և վազող ջրերու մէջ աղբատեղն դարձած են և արևու ջերմութեան ներք

տաքանալով, ամպանման գոլորշեաց հետ տղորդուած՝ կենասպառ գարշահոտութիւն կրարձրացնեն:

Չաս գիտեր, մանաւանդ Փիր, սայի ճանապարի չունենալու համար աղբեր արտերու վրայ տանելու և արտերէն որայներ և խոտեր գիւղամէջ իջեցնելու անկարելութեան մէջ կատնուին, հազի հազ գրասուոց կրնակով իրենց հնձանները փոխարքել կինարաւորին, իրենց մեռելասարաս կեանք բտելու: Մանաւանդ, որ կեղտասիրութիւնը ունակութիւն դարձած է սոցա: Տիրող իշխանութեան ազդու կերպ ընդհանրացած մոլորութիւնը:

Չաս տեղեր քարոզեցինք, որ իրարմէ բաժանուող եղբայրներ փոխարքուին արտօրէից կենտրոնատեղիներ բնակութիւն հաստատելու, որ դժուարութիւններ դիմանան, և մահառիք կենցաղավարութենէն ազատուին: Նորա կպատճառեն. «Քնչպէ՞ս բողումը մեր պապի օճախն, մեր եկեղեցին, մեր հարց գերեզմանները, և այս վերջիններն ո՞վ պիտի օրինել տայ և ողորմի հան: նոցա հոգույն»:

Տգիտութիւնը ժողովրդին այն աստիճան վայրենի և սնապաշտ դարձուած է, որ գիտի մօտակայ պատուական արտերէն չորս մեռելոց գերեզմանատեղի լինելու համար նուիրած է գեղական համայնութիւն, իսկ կենդանի մարդկանց կեանքի բարեկեցիկ լինելու համար մի արտ անգամ չեն տար տուն շինելու: Թող հասկանան գաղթական պօլեցի, տփխիսեցի, նոր-նախիջևանցի և այլ տարագնաց հայերը, որոնց թերևամտութեան առջ «խըմքը ու կոյ» կիամարուին Հայաստանի մէջ մնացող և իրենց դրսեր պանդխտող վանեցի, մշեցի և այլ հայերը, թէ Հայաստան որոնցմով հայաբնակ մնացեր է, իրենցնո՞վ, թէ՞ այս չարքաշներով:

Մինչև ցայիմ մեր շրջագայած գիտերէն միայն Նիւգգեար գիտ սայի վործածութիւն կընէ՝ իւր սահմանն կարի հարթ լինելու համար: Սիս գիտերէն ոմանց սահմաններ կա՞ն բոլորովին սար ու ձոր և առիկող են, որ սայլ գործածելն դժուարացած է, կա՞ն կիսով չափ ունեն այդ բնական դժուարացուցիչ պատճառներ, սակայն բոլոր հայոց գիտեր, իրարու աչք տալով, սայի գործածութիւն անհետացուցած են, իրենց հունձերը գրաստի քամակով կփոխադրեն, որով նոցա գործերն 3-6 անգամ դժուարացած է և դժուարանալով 3-6 անգամ ժամավաճառ կլիմեն՝ սայի «աղուներ» (սայի զնալու ճանապարհին վանեցիք «աղուր» կասեն) չպատրաստելու համար:

Կարի առիկող և շատ ելեէջ ճանապարհով փոխարքու գրասուոց 10 խուրձ օրան հազի կարող են բառնալ, այնինչ սայիին՝ 3 բարդ, այսինքն՝ 90 խուրձ կրառնան, որ երկու եզնով կփոխադրուի: Երկրագործներ այսպիսի խիստ և դժուարին աշխատութեան պատճառաւ թէ՝ արդինքին մի մասն կկորսնցունեն և թէ՝ նիհարած, կաշի և ոսկոր մնացած են:

Դիցուք թէ երկրագործն իր շօշափելի տգիտութեամբ իր շահն և վնասն չի ճանաչիր և կշռադատելու մտքի զօրութիւն կորսնցուցեր է: Հապա հարկահան կառավարիչներու խղճին հ՞նչ եղած է, տիրելու և կառավարելու շնորհը ո՞յ մնացեր է, որ այսպիսի տգետաց վրայ իրենց խնամք չեն ցոյց տար գէք տիրող իշխանութեան շահուն համար, որպէսզի իրենց կաքնատու բանական անասուններ թէ՝ իրանց և թէ՝ տիրող իշխանութեան աւելի օգտագործ լինեին:

Ոչ ապարէն անհատական հարստութիւն և ոյժն տիրող իշխանութեան հարստութիւն և ոյժ կկազմեն: Ես սոուզի վերահասու եղած եմ և կճանաչեն այնպիսի կառավարիչներ, որ երկրագործ մշակէն աւելի անխելք և անհետատես կիամարուին շնորհի իրենց անփոյթ և անհաւատարիմ գործավարութեան: Զի երկրագործ գիտ իր կաքնատու կովեր, ոչխարներ, աշխատող եզներ և գրաստներ բտել և գիրացնել, որպէսզի ժամանակին առատ կաքն և բուրդ ստանայ, և նոցա աշխատակցութեամբ դիրացնէ իր անհրաժեշտ գործեր, իսկ տիրող կառավարիչներ ոչինչ չեն մտածեր:

Կառավարիչներ, եթէ իրաւունք կիամարեն իրենց միմիայն գաւազանի հարուածի վարձատրութեամբ տեղական բնակչաց հարկադրելով՝ մարտկոցներու և պատերազմական պիտոյից փոխադրելու ճանապարհներ, մանաւանդ թէ ծառայող աստիճանաւորներու գրօսավայրի կառուլիներ շինել տալ, հապա ինչո՞ւ միևնոյն մտրակի (Եթէ չկան մարտավայել այլ միջոցներ) վարձատրութեամբ չեն շինել տար երկրագործ մշակներու երկրագործութեան ճանապարհները, որոնցմով մարդկային ազգի կենսական պիտոյքներ կառատանան և կկտանան թէ՝ երկրագործը և թէ՝ իշխանութիւնը:

Փիր գիտի երկրագործական ճանապարհներու քիչ տեղեր հարթելու և ուղղելու պէտք ունեն, այնպէս որ, եթէ գիրղացիք, տուն գլուխ մի մշակ տալով, առ առաւելն երկու շաբաթ միայն աշխատեն, սայլի աղուրն և ճանապարհներ կուղուեն, որով մշակական գործերն վեցէն իննօ մասն կզեղչուին և հնգի չափ կղիւրանայ: Մենք այս մասին թէ՝ առտնին խրատներ և յորդորներ կարդացինք և թէ՝ եկեղեցւոյ բեմնե խրատեցինք ժողովրդականաց: Թէև համոզուեցան մեր քարոզի օգտակարութեան, բայց գիրղացի անզարգացած ժողովուրդը, անսովոր աշխատութեան մէջ, ինքնուրոյն գործելու շնորհը չունի, մինչ որ իրեն գլխին կանգնող հրամանատար չի լիներ: Ուստի երբ մենք գիտէն հեռացանք, մեր քարոզները լոկ քարոզ մնացին՝ առանց գործադրութեան:

Ուրեմն տիրող իշխանութեան պարտք կմնայ գործել տալ գիրղացոց՝ յօգուտ ընդհանուր մարդկութեան: Թոյլ կտամք մեզի, մանաւանդ թէ պարտք կիամարենք իրեն երդուեալ պաշտօնակատար, յօգուտ քարեխնամ տէրութեան և հպատակաց, ասել,

թէ ինչպէս անցեալ տարի կառավարող իշխանութիւն իրաւունք համարեց ինքեան՝ միմիայն Փիր գիտէն 3000 մշակ և 800 բուրդի փող առնել<sup>130</sup> գաւառի ծառայող աստիճանաւորների Հաճի-քէնդ անուանեալ ամարանցի կառուղիներ հարկելու համար, թող պարտք համարէ ինքեան և երկրագործներու սայլուղիներ հարթել տալ, որով տէրութեան առ իր հպատակ ունեցած փոխադարձ պարտիք կատարուած կլինի:

Փիր գիտի ամբողջ իգական սեռ՝ թէ՝ հարուստ և թէ՝ աղքատ, առհասարակ բոկոտն կշրջին, ինչպէս և այս կողման բոլոր հայ-գիրղացի կանայք: Ունաման չունենալու պատճառաւ չէ այս չարքաշուրինը, այլ ընդհանրացած մի սովորութիւն է դարձեր: Ի՞նչ կկարծէք, որչա՞փ հեռու տեղեր կգնան: Շիշտ երկու ժամու ճանապարհ՝ ահազին սարեր ու ծորեր անցնելով, մինչև իրեանց բինա (հանգրուան) ասած տեղեր, որտեղ տարեկան իւղ և պանիր կշինեն: Առանց այր մարդու և երկիւ կրելու բինաներու մէջ կրնակեն գիշեր ցորեկով կանանց մի մասն իրեանց փոքրիկ զաւակներով մայսի սկզբէն մինչև սեպտեմբերի վերջը: Գիտիս մէջ մնացեալ կանայք զրադուած են կալ կալսելու գործողութեամբ, ամենայն ամենայնի՛ ցվերջ գործոյն և բանջարանցներ մշակելու:

5-10 բինա իրարու մօտ մի սառն աղբիրի գլխին կառուցած են սարերու լանջի վրայ, 4-5 բինա՝ այլ տեղ՝ բոլորովին հեռու առաջիններեն, միւս երկուերեններ այլ տեղ կրնակին ցան ու ցրի, որ որ սառն աղբիր կամ վտակ կգտնան՝ նոյնպէս առանց այր մարդու: Սոքա՝ բինաներու բնակիչ կանայք, շաբաթ 2-3 անգամ իսկ ոտքով գիտ կուգան՝ իրեանց հետ բերելով շալակած իւղ, պանիր, չորրան և այլ բաներ, վեր առած գիտի իրեանց տներէն իրեանց պիտոյից չափով հաց՝ կվերադառնան բինաները՝ դարձեալ բոքիկ ոտքով այն քարքարուտ ու խիճ քարերով լի ճանապարհը, շատ անգամ իրեանց 5-8 տարեկան զաւակաց ձեռքէն բոնելով, որ դարձեալ իրեանց նման բոկոտն են, մինչև հասնեն իրեանց բինաներ: Միգուց քիչ չափազանցութիւն բուի, անտես և անսովո՞ր ընթերցող, 5-8 տարեկան մանկանց բոկ ուտամք, 2 ժամու ճանապարհ քալելու խօսքեր: Մենք բինա ասուած տեղեր գնալու ժամանակ քանի՛-քանի կիններ և մանուկներ տեսանք երթալու-գալու ճանապարհի մէջ:

Գիտիս պաղենի հանքը նախապէս տեղական հայեր կիրահալին իրեանց պապենական սովորութեան կերպով, և այն ժամանակ թէ՝ իրեանք կշահուեն և թէ՝ տէրութեան բաւական շահ կուտային՝ փուր մի մնթ. ծախելով: Անցեալ վերջին տարիներու մէջ նախ մի հրեա և ապա տփիսիսեցի հանգուցեալ Միրզայօվն պաղենի հանք կապալով վերցուցին

130 «Ըստ այս հաշուելու է և այլ գիտերու բաժ, հաս, հարկ, կոռ և բեկար» (Ծնբ. հեղինակի):

տիրող իշխանութենէն: Սակայն երկուքն ևս վճառուեցան, և այս պատճառաւ հանըն 5 տարիէ ի վեր գործադուլ եղած է: Գործարանը, որոյ շինութիւնները 50.000 ռուբլիով հազի կառուցուած են, այժմ բոլորվին քայլայման վիճակի մէջ կզտնոի, ուստի և հանրահանութիւնն դադարած է՝ ի վճառ տէրութեան գանձուն:

Փիր գիլացիք համայնական գործակցութեամբ իրարու օգնելու տվյալութիւն ունեն, բայց, ափսոս, որ միմիայն նոր կալատեղեր պնդացնելոյ գործին մէջ, ոչ երբեք ճանապարհաշինութեան համար, և այս էլ դժբախտաբար կիրակէ օրերին: Թմբուկի և շեփորի հրամական ձայնով գիտի երկսեղի բազմութիւնը նոր շինուած կայի վերայ կժողովուին: Անոնցմէ երկու սեղի ամուրիներ պար կկազմեն և զանազան կերպ պարախաղերու միջոցաւ նոր կալատեղը կոխ տալով կը պնդացնեն: Երբ մենք բինաներէն կվերաբանայինք, հանդիպեցամբ այդ խայտաճամուկ պարահանդէսով կալահանդէսին և մի կողմ քաշուած հետաքրքիր կլինէինք: Հպարտ գիդացի ամուրիներ սկսեցին մանէքներ տեղալ, իրաքանչիր իր հաւանած պար եկող աղջկան ձերին: Եղան աղջիկներ, որոնց ձեռքին 4-6 մանէքներ մատուցուեցան:

Այսպիսի գնահատուած աղջիկներ, պարէն դուրս գալով, փոխանակ թաշկինակի՝ մանէքներ իրենց մատներու մէջ բաց բռնած, օդին մէջ ծածանեցնելով կկարատէին, և իրաքանչիրն առանձինառանձին իր նազախաղը լրացնելէն զկնի ի պատի ինքեան նուիրուած մանէքները բաշխեց շեփոր ածողին: Ես, այդ առատածեռնութեան վրայ զարմացած, պախարակեցի նոցա շռայլութիւնը, բայց ինձ մեկնեցին այդ շռայլութեան գաղտնիքն այսպէս: Պարահանդէսէն վերջը իրաքանչիր մանէքը իր տիրոջ կրաքանէ շեփոր ածողն՝ մէն մի մանէքն 2 կոպէկ վարձ վերցնելով իրեն: Բոլոր իգական սեռը այդ օրը իրենց պատուաւոր զգեստներ հագած էր, որոնց վերնազգեստի կախրեանի արխալուի (շափեան) թերու վարի կողմը, սկսեալ կրնատակէն մինչև ձեռքի մօտը, կարգ մը փայլուն արասիներ կարուած կային: Նազախաղը ըրած միջոցին, երբ թերնին սիգապանծ շարժումներով վեր ի վայր կխաղացնէին, փայլուն արասիները, արեգական շողերն իրենց մէջ հատանելով և անդրադարձ ցոլացումն տալով, գեղեցիկ փայլը կուտային: Բայց յայսմանէ, իրենց երեսների, օձիքներու, կուրծքերու և լանջերու վրայ զանազան ձեռքով շինուած արծարեայ զարդեր կարած ունիին, որոնք նոյնական փայլը կուտային իրենց շախս ու շուխս ձայններու հետ: Բայց, ափսո՞ս, որ այդ զարդերու անունները բոլորն էլ բուրքերէն էին, ուստի և ես չկարողացայ քանի մի հայկական բառեր գիլական նութ անկիւնէն ի լոյս բերել:

Այդ չափ արծարեայ զարդարանքն հակառակ՝ ոչ միոյն ոսքին ոտնաման չկար, լինէր դա հա-

րուստ թէ աղքատ, պառաւ թէ մանկամարդ, տհաս թէ նշանած աղջիկ՝ բոլորն էլ, առանց բացառութեան, բոկոսն էին:

Փիր գիլէն 5 ուսանող կայ Գանձակու արիեստաւորաց ուսումնարանի մէջ, մինն էլ՝ Տփխիսու:

## L

### Վերին Ղոյքիլ

Ամսոյ 29-ին Փիրէն մեկնեցանք Վերին Ղոյքիլ ասուած աւերակ շինատեղին, որուն շրջապատ անդաստաններ ու աստաններ իրեւ ազարակ, սեպհականութիւն են Բարսում գիլացի Մելիք-Ռոստոմեանց իին և բազմաբի գերդաստանին, որ 50-ի չափ անձինքներ կրաղկանայ: Սոյն գերդաստան, ասկէ երկու տարի առաջ բաժանուելով, եօթն տուն եղած են<sup>131</sup>:

Կպատմեն, թէ Մելիք-Ռոստոմեանցի ծագումը Բազրաստումի ցեղէն սերած է, և այդ ազգարանական ծագումն հաստատելու համար ոռուերէն մի տեսոր հրատարակուած է անցեալ մօտակայ ժամանակի մէջ: Ռոստոմեանց ներկայ գերդաստան թէպէտու բաժանուած է անդամոց շատութեան համար, բայց իրենց հայրենական հողային կալուածները ի միասին կմշակեն, և նոցա կալատեղին և տաւարեղենաց նախիր, ոչխարաց հոտ և գրաստոց ջոլիք կգտնուին սոյն Վերին Ղոյքիլ ըսուած կալուածին մէջ, որ ամէն կողմանէ երկու-երկու ժամու ճանապարհաշափ հերի կգտնուի ամէն կերպ դրացիական օգնականութենէ և կպաշտպանուի միմիայն իր գերդաստանի արի և թիկնաւէտ երիտասարդներով: Սոյն կալատեղի մէջ հիլրնկալուցանք մէկ զիշեր և ննջեցինք բարձրավանդակ լեռնադաշտային բացողեայ վայրի մէջ, որուն ընդարձակ հորիզոնի, զինջ օդի և աղրիւրաջրի պատուականութեան հետ կփայլէին ամէն կերպ մաքրութիւն և բնակչաց սրտի սրբութիւն: «Այսպէս օրինեսցի ամենայն մարդ, որ երկնչ ի տեսանէ»:

Սոյն ազգարակի արևելեան կողմը կայ մի աւերակ շինատեղի՝ Հնգշափոր անուամբ, որոյ մէջ կգտնուին հայոց կիսափուլ եկեղեցի և գերեզմանոց: Ազգարակին հարաւակողմը կայ մի Կարմիր եկեղեցի անունով ուխտատեղի, որ մօտ ժամանակներս փայտայրկով նորոգուած է սոյն ցեղի ձեռքով: Եւ այնտեղէն վայր կայ մի մատու՛ Թռած խաչ անունով: Արևմտեան կողմը՝ Շամքոր գետի աջ ափին, կայ մի մատու՛ Տուկափիկայ խաչ անուալ, այսինքն՝ փոշտանգի խաչ, որը ուխտի կտանեն փոշտանգուած մանուկները: Նոյն ափին մօտ կգտնուի Ներքի Ղոյքիլ անունով աւերակ շինատեղին, որոյ միջի Ո. Յովհաննէս անուն եկեղեցին կանգուն կայ մինչև ցայսօր, որոյ արևմտեան լու-

<sup>131</sup> «Մելիք-Ռոստոմը բաղուած է Գանձակու Ս. Յովհաննէս մայր եկեղեցոյ գարի մէջ (ծնեալ՝ 1722 թ., վախճանեալ՝ 1794-ին)» (ծնը՝ հետինակի):

սամուտէն ներս կանցնեն այն ամէն երեխաներ, ո-րոնք ոչ ոտքի կելնեն: Կայ այդուեղ և գերեզմանոց: Իսկ սորա հիւսիսային կողմը՝ զմբեթաձև բարձրացած սեպացեալ սարավիշին, կայ *Ս. Մինաս* անունով ոխտառեղի՝ ճգնաւորի գերեզմանով, որուն կղիմն փորացա ոխտառոներ, որո անցեալ մօս ժամանակի մէջ նորոգեր է տփիսիսեցի Մինաս Յակովեան Կօլատեանցը: «Հիշատակն արդարոց օրինութեամբ եղիցի»: Իսկ հիւսիսարևելեան կողմը կայ Քարայատակ անունով աերակ շինատեղի, որոյ մէջ կան գերեզմանոց և կիսափուլ քարուկիր ե-կեղեցի:

### ԼԱ Բարսում<sup>132</sup>

Ամսոյս 30-ին այցելեցինք Բարսում գիւղը՝ յիշեալ Սելիք-Ռոստոմեանցներու բնակավայրը, որ կգտնուի Շամբոր գետի ձախ ափին՝ ձորավայրի մէջ, որ չորեքուսէ շրջապատուած է լեռներով: Այնշափ նեղ և անձուկ է վայրն, որ նորա բոլորակաձև և ամփոփ հորիզոնով երկինք էլ նոյնապէս փորք կերևի: Գիւղիս մօտակայ շրջապատող լեռներու անտառները, բոլորովին անհետացած լինելով, գիւղս կգտնուի բուսականութեամբ մեռած կեանքի մէջ, իսկ գիւղի ներքս Շամբոր գետէն հանուած առուով ուռճացած, պերճացած խաղողի և մրգեղենաց ծառատանի այգիներ իրենց կենդանութեամբ բոլորովին հակասատկեր կներկայացնեն գիւղի մեռելատիա կերպին: Գիւղացիներ, իրենց արածականներով մի ժամու ճանապարհ հեռու, հովասուն լեռնադաշտեր գնացած լինելով, բոլորովին տիխորուեամբ համակուած էր Բարսում գիւղ: Գիւղիս մէջ կգտնուին միայն քանի մի զառամեալ ծերեր և պառաւներ, զիրենք կերակրող քանի մի հաւերով:

Գիւղս կրաղկանայ 155 տուն զուտ հայ բնակիչներէ՝ 617 արական, 556 իգական: Ունի մի ին, փայտայարկ, խոնաւ և նսեմ եկեղեցի՝ *Ս. Աստուածածին* անունով: Այնշափ ցած է, որ իր առաջար կողմի երեք պատերը բաղուած են հողի մէջ, գրեք հաւասար են դրսի մակերևույթին: Արտաքուստ եկեղեցի լինելու ոչինչ նշան չունի, բացի մի տախտակաշէն զանգակատունն: Սակայն երեք տարիէ ի վեր սկսած են շինել քարուկիր և հոյակապ եկեղեցի, ձեռներեցութեամբ և հոգատարութեամբ Սելիք-Ռոստոմեան արժանապատի Եփին քահանայի, որ տակախին անաւարտ կմնայ:

Սոյն քահանայն այս կողման հոգ. գործոց գործակատարն է, պաշտօնը ճշտութեամբ վարելու համար ստեղծուած մարդ՝ հասակ՝ վայելու, արծուաքիթ, ծանրաբարոյ, քահանայավայել համեստութեամբ, հետևապէս և պատկառելի մի անձնաւորու-

թիւն է: Յայտնապէս կտեսնուի իր վրայէն ազնի ցեղի արեանասուրենէ գոյացած լինելն: Եթի հարց առաջարկուի իրեն, նա լուրջ դէմք կստանայ և կշռադատելով կպատասխանէ: Ամբողջ գաւառին յարգելի եղած է, առանց խտրութեան կրօնի: Կարծես ամէն մարդու բարերարութիւն ըրած լինի:

Գիւղս ունի երկու դասարանով մի գեղեցիկ վարժարան, որոյ մէջ կուսանմէին երբեմն գիւղի մանուկներ, բայց քանի տարիէ ի վեր գիւղի ցանքերն բաւականացուիչ բերք չունենալու համար վարժարան դադարած է:

Գիւղս գետափի վերի կողման այգիներու մէջ ունի մի փոքրիկ եկեղեցի՝ *Ս. Ցովհաննէսէս* անուն, որուն կղիմն ականջացաւ ունեցող ոխտառոներ: Վարի կողման այգիներու մէջ կայ Հոփիսիմէտ անունով խոնարհուած վանք և իր շորջը՝ փոքրաբի գերեզմանոց: Այգիներու ճանապարհի վերև գտնուուրուուր առուակի վրայ կայ մի խոնարհուած փոքրիկ եկեղեցի՝ հանդերձ գերեզմանցով: Փիրեցի հանգուցեալ Յարութիւն վարդապետ Մամիկոնեան իր ծերութեան ժամանակին յայտնել է սոյն գիւղացուց, թէ «Մշու Ս. Կարապետ վանքէն բերած մասունք քաղել են նոյն եկեղեցոյ մէջ»: Գիւղիս հարավային կողման տներու մէջ կայ մի փոքրիկ եկեղեցի՝ Գիւարեր անուն: Անորմէ վեր՝ տներէն դրւս, կայ մի փոքրիկ կիսաւեր մատուու Թառան եկեղեցի անունով: Գիւղիս կալատեղեր բարձրացող ճանապարհի մէջտեղ կայ մի փոքրիկ մատուու, փոքրիկ կաղնի ծառի ներքէ՝ Կաղնախաչ անունով, որուն հայ ոխտառոներէն աւելի կյաճախին թուրք ոխտառոներ յօդացաւ ասուած հիւանդութիւնէ բժշկուելու հաւաքով: Գիւղիս կալատեղոյ հիւսիսային կողմն կան մի փոքրիկ եկեղեցի՝ Խարունքեր (քոյր) անուն և գերեզմանոց:

Գիւղս ունի 8 ուսանո՞ւ 1-ը՝ Գանձակու գիւղնախոնը, 1 արհեստաւորաց, 1 քաղաքական, իսկ 4-ը՝ Փիր գիւղի ուսումնարանը:

### ԼԲ Գառնակեր<sup>133</sup>

Ամսոյս 31-ին այցելեցինք ի Գառնակեր գիւղ այն պահուն, երբ արևն ի նուտ խոնարհուած էր:

Գիւղս կրաղկանայ 84 տուն զուտ հայ բնակիչներէ՝ 380 արական, 360 իգական: Գիւղս հաստատուած է Շամբոր գետի ձախ ափին՝ Բարսումէն քիչ վեր՝ շրջապատող լեռանց ծնկան վերայ, որտեղ գետնափորի աջ ու ձախ կողմերն ևս դէմ առ դէմ ձոր լինելով, ուղղաբերձ չորս լեռանց մէջ գիւղավայրն խաչաձև կերևնայ: Խաչաձև հորիզոնի պատճառաւ երկինքն էլ խաչաձև է, լաւ ևս է ասել՝ չորս խորդուրորդ, բարձր պատերու վրայ ձգուած

<sup>132</sup> Գտնվում է Շամբորի համանուն շրջկենտրոնից 20 կմ հարավ՝ Շամբոր գետի ձախակողմյան ձորալանջին (ծ. մ. բարձր է 770-850 մ):

<sup>133</sup> Գտնվում է Շամբորի համանուն շրջկենտրոնից 23 կմ հարավ՝ Շամբոր գետի ձախակողմյան ձորալանջին (ծ. մ. բարձր է 800-870 մ):


կապտագոյն քառակուսի առաստաղ ձևացեր է: Այս երկնային առաստաղն այնչափ փոքր է, որ աստղատան զիսաւոր լուսագունդերէն շատ քչեր կտեսնուիմ: Այնպէս զարմանալի ձև ստացած են Գառնակերի զիտատեղին և նորա հորիզոնը, որ եթէ, երբեկից զիտարճակութիւն խապար անհետացած լինի, խաչածն վայրէն կարելի կիխնի հաստատապէս զիտատեղն մատնանիշ անել ապագայի մէջ:

Դոյն չորս բարձրաբերձ լեռներ աշխարհիս չորս կողմը մեր դէմ փակելով՝ մի աներևակայելի մտաշրջութիւն կազմուեցաւ մեր մէջ: Կարծես թէ այդ վայրը մեր բնակած երկրագնդէն դուրս՝ մի այլ աշխարհի լինէր, և կամ մենք մի այլ նոր լոյս ընկած աշխարհի մէջ յանկարծ տեղափոխուած լինէինք: Այնպիսի՝ տրանսպորտիւան ներք ընկած էր մեր յեղաջրեալ միտքը, որ կարծես թէ մեր ծանօթ աշխարհի ունեցած բոլոր կառավարչական կերպեր, զանազան ազգաց իրարու դէմ լարած խարուսիկ քաղաքականութիւններ, կերպ-կերպ պատրուակաւ տողորուած նենգամտութիւններ, մարդկային բարյականութիւնը քայրայոյ կեղծ ու պատիր վարմունքներ և զայթակդեցուցիչ կենցաղավարութիւններ, զիրար եղծանող օրէնքներ և վերջապէս սրբութեամ կեղծ քողով գործուած սրբադութիւններ խապար արտահալած եղեր էին այս ատենական դար ներկայացնող պարզավայրէն:

Գիտի միակ քահանայն տէր Յովսէփ Պալեանց, Քրիստոսի հաւատարիմ փոխանորդն էր և երկնից պատգամարերն այդ անքիծ հաւատաւոր ժողովրդեան համար: Նա ինքն է միանգամայն աստուածապաշտութեան և ժամասացութեան ուսուցիչ զիտի մատադ սերնդին: Գիտի բնակչաց պարզ կենցաղավարութիւն կարծես թէ ցոյց կուտար, որ երբէք տեղույն ժողովուրդ հաղորդ եղած չէ եղեր աշխարհիս խարուսիկ քաղաքականութեանը: Հոգևոր և մարմնաւոր իշխանութեանց հրամաններ անմիջապէս կատարուած էին և կկատարուէին փութով սոյն զիտի մէջ՝ իրբէ իրենց անհրաժեշտ պարտուց հատուցումն:

Գիտի տներ հին նահապետական ձևով շինուած են, քայլ փողոցներ թէն նեղագոյն, սակայն մաքուր էին: Բնաւ մի արոռ չգտնուեցաւ մեզ համար զիտի մէջ, այլ փոխանակ արոտի՝ քակերու առջև քառակուսի տաշուած հաստ գերաններ պառկեցուցեր էին կամ կոճդի բոլորչի կտորներ դրած՝ նստելու համար և կամ հողէ բումբեր շինած: Թթենեաց ծառերու ճիւղեր խառնուած էին տանց կտորներու ցուկներու գերանածայրերի հետ: Սրանչելի էր այդ աշքապարար տեսարանը և ամէն քան պարզ ատենական տարու կեանքի պատկերը կներկայացներ:

Գիտացուց մտքեր զբաղուած են միմիայն իրենց ապրուստի միջոցներով, զի այր և կին ամենայն շարքաջութեամբ և անտրունց կերպով կկատա-



ԳԱՌԱՎԱԾ ՀԱՏՎԱԾ ԳՐՈՒԼԻՑ (ԼՈՒ.՝ Ա. ՕՒԱՆՅԱՆԻ, 1980-ԱԿԱՆ թթ.)

րեն լծորդակցաբար իրենց պարտաւորութիւններ՝ ապրելու համար:

Գիտի անդամակոր ձորի մէջ, իրենց գիներեր և մրգասու այգիներէն և բահեզներէն զատ, ուրիշ մշակեի վայր չունեն, զի վարելահողեր, ճիշտ մի ժամու ճամփայ հեռի, ուղիղ զառիվերութեան բարձր սարադաշտի վրայ կգտնուին, որտեղ և իրենց կալատեղերն են: Ուստի ամէն օր՝ հնաձամանակ, մրջինի կարավանի պէս այր և կիներ շարունակ երթենկութիւն կանեն այդ ահագին զառիվերութեան վրայ՝ զիտից կալատեղեր և անտեղից ի գիտ:

Մանաւանդ թէ քանի դժուարութիւն է, երբ շատեր իրենց արմտեաց հետ և դարմաններն էլ գրաստով կամ շալակով ի վայր՝ զիտատեղին կիցեցնեն: Կարծես թէ սոցա սահմանուած լինեն երկնքէն ամէն տեսակ նեղութիւններ:

Գիտի հանդէպ՝ գետի աջ ափին, կամուրջին կից, կայ մի մասուով՝ ջղացաւութեան բժշկիչ: Արևմտակորմ՝ գիտէն կալատեղ գնալու ճանապարհի զառիվերութիւն լրանալուն տեղը, երեք խաչեր կամ՝ քով կանգնած Կաղան խաչ անունով, որոնց վրայի զորացեալ մեծ կաղնին Յ տարի առաջ կտրեր են զիտացիք:

Կալատեղերուն կից մի մեծ բոլորչի խաչաբար կայ, որոյ երեսին վրայ՝ թզաչափ լայնութեամբ և կէս կանգուն խորութեամբ ծակ փորուած, վնասաբեր անձրևային տարիներն կրակ կվառեն նոյն քարին վրայ՝ անձրև նուազեցնելու, իսկ երաշտ տարիներ ջոր կածեն զիսիին՝ տարին անձրևաբեր ընելու:

Յիշեալ ծակ քարէն դէպի արևմուտ՝ մի վերստ հեռաւորութեան վրայ գտնուած աղբիրի զիսիին, երկու խաչաբարեր կամ, քոստոններ (քորոտ), նոյն աղբիրի մէջ լողանալով, կարրուեն:

Կալատեղեաց հանդէպ՝ հիւսիսային կողման քարափի զիսիին, դղեակի մնացորդներ կերևին: Նոյն կալատեղոյ արևմտակորմը՝ 1 1/2 վերան հեռաւորութեամբ, սարազիսին կգտնուեն նոյնպէս դղեակի մնացորդներ, որ Գեաւոր-Ղալէ կանուանուեն:



ԳԱՌՆԱԿԵՐ. Ծաղկոցավանքը հարավ-արևմուտքից (լուս.՝ Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)

## ԼԳ Ծաղկոցավանք

Օգոստոս ամսոյ 1-ին դիմեցինք Ծաղկոցավանք, որ Գառնակեր գիտէն վեր 1 1/2 վերստ հեռաւորութիւն ունի, կառուցուած է Ծամբոր գետի ձախ ափին:

Սա մի փոքրիկ տաճար է, տաճար կըսեմ, զի առաքելական դարու ձևով շինուած է: Ունի մեծ, բարձր դրու: Եւր մէջ կերպ աւագ-խորանը: Տաճարի մէջ եկեղեցական պաշտօնեաներ դպիրներով պատարագ կմատուցանեն: Տաճարի մեծ դրան առջև շինուած է ժամատուն՝ աղօթաւոր ժողովրդեան նորա մէջ կանգնելու, որը տաճարի մեծ դրոնվ կտեսնելին նորա մէջ մատուցուած պատարագ: Հայատանի մէջ աւանդութեամբ կպատմեն, թէ առաքելական դարու տաճարներ այս կերպ կշինուէին, այսինքն՝ տաճարի դրմէն դուրս և ժամատուն, ինչպէս որ Վան քաղաքի մի քանի եկեղեցիներ և այն կողման քանքեր այդ կերպ շինուած են Արծրունեաց տիրապետութենէն առաջ: Ի նշան առաքելական դարու շինութեան՝ տաճարի մէջ՝ մի յայտնի տեղ, յից (յէց) ի յորմն խաչ կկանգնեցնէին և նոյն խաչի կենտրոնի ակն-խաչի ըսուած տեղ մի քետ կմխէին, ինչպէս որ ցայսօր ժամանակի կտեսնուի Վանայ «Յայն կոյս- ձորոյ» Ս. Աստուածածնայ տաճարի արևմտեան որմի խաչին փրայ: Նոյնպէս անդ ի Վանս Կարմրուրայ Ծաղկոցավանքն որուս՝ եկե-

ղեցւոյ դրան իհիսիսային կողմ՝ մի մեծ կաղնի ծառի ներքե, կայ մի խաչակիր պատուհան, որտեղ ուխտաւորներ խունկ ու մոմ կվառեն և իրենց շորի կտորներ կկապեն նոյն ծառի ճիղերի փրայ՝ ի փարատումն իրենց ցաւոց:

Ծաղկոցավանքն դէպի վեր՝ 1/4 վերստ հեռաւորութեամք՝ նոյն գետի ձախ ափին, կայ շինուած մի միարանական վանք, որ ունի մի քանի անձովկ խցեր: Յիշեալ երկորին վանքերու ամբողջ միջնավայր կկազմէ վանական այգին, որ երկորին վանքերու միջի հորիզոնական գծէն սկսեալ իջանելով՝ կվերջանայ Ծամբոր գետի ափը: Յիշեալ այգիի ստորին մասը գիտացիք իրացուցեր են վանքերու անմարդարնակի եղած միջոցներին: Վանքն ունի երեսնաշափ օրավար վարելահողեր, որ այժմ վիճելի է քաղաքական կառավարութեան հետ:

Այն վանքերուն 8 տարիէն ի վեր վանահայր կարգուած է վանասէր Յովկաննէս ծերունազարդ վարդապետ Քարաղամեանց: Սա ունի երկու ծառայ, որը այգին կպահպանեն, և՝ բանջարանոց կմշակն, և՝ մի ծի: Ո՛չ եզ, ո՛չ ոչխար և ո՛չ հողային կալուած: Ունի 6 մետրի փերակ, 20-ի չափ հաւ, տասն կտոր պղնձեղն և երկու ծեռք անկողին, ահա նորա բոլոր ապրուատի միջոցներ, որոնցմով կտնտեսուի վանահայր ուտիք և պահք օրերը: Եւր բոլոր ստացուածոց պատկն կիամարուի մի փայլուն սամօվար, որ իր միակ միսիթարութիւն է՝ ընծայուած զանձակեցի աւ. Սկրտիչ Նարաքն անձէն:

Վանահայրն 73 տարեկան ժիր, ջլապինդ, արագաքայլ, փոքրիկ ծեր մի է, որ երբեմն կվազէ ալ, երբ վանիք կարևոր մի գործ մտքին կուզայ՝<sup>134</sup>:

Վանահօր ատամներ սպիտակագոյն են, քան միարուիք մազերն: Սա, լինելով այսափ շքատրութեան մէջ, 3 տարի առաջ 150 ր. փող տալով, այգիի վերի կողմը քարերով ցանկապատեր է, գիտե՞ս, ո՞ր տեղէն, իմ ա. ընթերցող, այսափ փող տուեր է, և գիտե՞ս, թէ ինչո՞ւ իր մէկ հատիկ ձին չի ծախեր երկու կով առնելու, իր քարեկեցութեան համար, որպէսզի վանքի այսպիսի կարևոր պիտոյից համար այդ ծիով գնայ մեր քարեպաշտ շինական եղայրներէն քանի մի փուր ցորեն մուրայ՝ այս կիսակործան վանքեր պահպանելու: Գիտե՞ս, իմ զուարձասէր ընթերցող, կիսակործան տաճարներ չեն պահպանուիք՝ խրախճանական սեղաններու շուրջը բազմած երգելով՝ «Ողջոյն տուէք մեր հայրենեաց կիսակործան տաճարներուն», այլ այսպիսի անձնուրաց, չարքաշ արեղաններու քշուառակեցութեան նահատակութեամբ:

## ՀԴ

### Գառնակեր գիտի կալեր

Նոյն օրը Ծաղկոցավանքէն վերադարձանք ի նոյն Գառնակեր գիտ և անմիջապէս ձիաւորեալ, զի օրն տարաժամեալ էր, բարձրացանք գիտի կալեր:

Դեռ նախիրը չէր եկած: Տեղոյն գործողութիւն խուժապ վիճակի մէջ էր, և ամէն գործողութիւն իր կարգն ունէր: Կալաեզմներ բող տուին: Հասակաւոր աղջիկներ անմիջապէս ջուր բերելու գնացին. ոմանք ցիր ու ցան խմբերով իրենց ծաղը ու քրիզ բարձրացուցած, ոմանք առանձին-առանձին և տխուր, ոմանք սրտակից և հասակակիցներ գոյգ-գոյգ ընկերացած կերպային: Վերջիններէս մինը յանկալծ խորիրդաւոր խտիս տուալ իր ընկեր աղջկան կողքին, որ բոլոր մարմնով ցնցուեցաւ և ամօրահար աշքի ճորով այս ու այն կողմ դիտել սկսեց: Խտիս տուող աղջիկն գոյի պէս մատնացոյց արաւ առօնի կողմ նայելու, և երկուրն ի միասին սկսեցին քայլերնին յամրացունել՝ վայրկեան մի ուշ հասնելու, որպէսզի ցնցուող աղջիկ դաշտէն եկող փափախը ծուռ, գերանին ուսին, հապատիկարտ ձիու վրայ հեծած ու ձին կատադեցնող ու փնչացնող երիտասարդին տեսնայ ու դիտէ կշտանալու չափ: Զիաւոր երիտասարդը, այս անմէն տեսնալով, իր վրայ նայող աշքին մի համապատասխան հայեացը ձգեց և կամնեցաւ իր ձին օդաչու ընելու հետանալ: Սորա արդէն նշանուածներ էին:

Հեռուէն ամպի պէս փոշի բարձրացնող նախիր կուվեր, իրաքանչիր իր հորին բառաշելով, նախապէս աւետեցին իրեանց վերադարձը: Հորթերու

նախիր մէկ ժամ առաջ արդէն եկած և փոքր աղջկանց հոգացողութեանք ցանկապատ բակերու մէջ զետեղուած էր, որ նախիրի գալու ժամանակ չխառնուէր նախիր մէջ և չծծէր իրենց մայրեր, առանց տանուտէր կնոց ազակ կրոցն փրփրացնելու: Կալապան մէծ աղջիկներ ու կիններ թող տուին անմիջապէս իրենց կալապանական ձեռքի գործ, իրաքանչիր աղջիկ նախիրէն զատեց իրենց կովեր, կիններ տնէն կրոց բերելու փուրացան, փոքրիկ աղջիկներ հորթեր մէկիկ-մէկիկ թող տուին բակէն դուրս գալու: Կրող կինն մի փոքր ծծեցուց հորթին, որ կովի պտուկներ կակդեն ու բուլանան կրուելու: Կինն կրել սկսեց: Մեծ աղջիկ, որ կովի գլուխ բռնած էր, նորա պողատակեր, ճակատ և պուճուծակ (ծոծրակ) կրերէր իր մատներով, որ կովն այդ հեշտասիրութենին գրաւուած հանդարտ մնայ կրուելու: Բայց փոքրիկ, զուարձասէր սերունդ, մի-մի վարոց ձեռքերնին բռնած, անցնող նախիր երինչներուն, արջաններուն, զամրիկ ձիերու մտրուկներուն խոիկ տալով (հալածել), նոցա ոստիւններու վրայ զուարձացած, աղջուկ կիսներ իրենց ճվճվոցներով: Մեզ հետ նստող ծերունի և պատկառելի անձինք որչափ ցանացին սաստել, որ լոեն, ի հարկէ ի պատի մեր, նորա բնաւ յետ չկասեցան իրենց զուարձասիրութենէ: Սորա բազաւորական հրովարտակին նշանակութիւն շտուտ անմեր հրեշտակներէն էին:

Նախրակիր գործէն լմննալէն զինի, գործօն կանայք և աղջկունք սկսեցին վերջնալուսով աւուր կասածն կալերն թեղել, ոմանք սրբուած ասուր ցորեան և զարին չուալներով ամբար տանել, այլ բամուած (երան եղած) յարդն կալատակի մարագ լեցնել, այլ ճախաւելով (ցախաւել) կմաքրէին կալատակ՝ վաղուեան աւուր աշան (կալատեղի վրայ պարզուած որայն) պատրաստ անելու: Վերջնալուսով ընելու գործէր լմննալուն պէս ընթրիք արին և բնութեան օրինակ այդ հաւատարիմ հպատակներ, առանց Սորփեոսի թմբեցուցիչ ներգործութեան սպասելու, քնացան: Կոպեր ծանրացնող նիրին, աստուածային օրինառաք աշխատասիրութեան, ինքնին հետևեց՝ քաղաքացոց դժխէմ սովորութիւնը այպանելով: Արշալոյսին ամէն կարգի աշխատաւորներ (բացի մանուկներէն) վեր կացան իրենց խոնչեալ անդամոց այնախիս կազդուրմամբ, որ նախանձելի է փափկակեաց քաղաքացի հարուստներուն, ոքք անհանգիստ քնով աւելի կրմրէն և կիսնչեն, քան թէ կկազդուրուիխ: Արևածագէն առաջ հարուստ գիտացիք, ձիերնին հեծած, գերանին ուսին, աղջատներ հետիւոտն արտօրայք ցնացին: Կանայք և աղջկունք կալատեղի վրայ որաներ աշան ըրին, որ մի փոքր չորանայ՝ դիւրա կասուելու: Կալեր կասուել սկսեցին: Առաջին տարիներ այս կողմի բոլոր գիտերը եզներով կշրջեցնելին կամերը, իսկ մօտ տարիները, Ռուսաց տիրապետութենէլ զկնի, իրաքանչիր ձիու ետև մի կամք քաշ արած, ոմանք աղջիկներ 2-3 ձիու սանձեր ի բոին,

<sup>134</sup> «Խսկ Բարում գիտի կալատեղերը գնալու ժամանակ մեզ ուղեկցող ձիաւորներու ձիարշատին խաչէն ալ յետ շմնաց» (Ժնք. հեղինակի):

միւս ձեռքին՝ խարազան, կալամէջ տեղ կանգնած, ձիերը կվարեն շրջելու՝ իրենք էլ փոքր պտոյտ տալով նոցա հետ: Կանայք, հորսելին բռնած, անդադար կուղղեն կալամիջի աշանի խորդուրորդ եղած տեղերը, կալափերն վրայ կուտան և աշանը կշրջեն՝ խոշոր մնացած ցողունները կալերեսը հանելով (օրական 14 ժամ աշխատութիւն ընել, իգական սեղի համար, հաւատալի<sup>9</sup> է քեզ, քաղաքացի՝ ընթերցող):

Արևածագէն պահ մի ետք նախիր եկաւ գիղագլուխ կրուելու: Կանանց և աղջկանց մի մասն այնտեղ դիմեց, բայց, ափսո՞ս, որ մենք էլ հեծանք և հեռացանք՝ Զազիր գիտ գնալու, թող տալով այն հովասուն կալատեղը, որ այնչափ բարձր էր, որ արեգակը ուղիղ հորիզոնական գծով բարեւց մեզ առաւտեան: Երբ մենք ճանապարհին կանանց ծանր աշխատութեան մասին մեր նկատողութիւններ կհաղորդէինք գործակատար Եփրեմ քահանային, նա պատասխանեց մեզ, թէ շատ օգտակար է կանանց աշխատութիւնը, զի նորանով թէ՛ իրենք կուժիանան, թէ՛ իրենց գեղեցկութիւն ու բարձութիւն ընդ երկար կպահպանուի, հակառակ քաղաքացի կանանց, որք շուտով կթառամին, և թէ՛ աշխատութեամբ նոցա կազմուածքը ջլապնդելով՝ ծննդեան ժամանակը թէ՛ երկունք քերև կինի, և թէ՛ հարիր զաւակաբեր կանանցից մինն հազի մանկարածի կկարութի: Մի՞թէ այդպէս, ըսի ես անոր: Հապա՞ն, պատասխանեց նա, զի բնականապէս ինչպէս որ կուեր, ոչսարներ ենք, իրենց կծնանին, առանց ուրիշի օգնութեան, այնպէս էլ գիտի կանայք: Օրինակ, ըսաւ տէր Եփրեմ, գիշեր՝ եկեղեցին գնալիս, տեսայ, որ մի կին իր անպատ բակի մէջ տղան ծննանելիս, ինձի որ տեսաւ, հեռացաւ՝ ծնած երեխան մնաց տեղն ի տեղ լաց լինելով: Գառնակերցի Յովսէփ քահանայն վրայ բերեց. «Ես այգին գնալիս տեսայ մի կին, միայնակ իր այգույ մէջ մի մեծ ընկուզենիի ետև քառուած՝ ծնաւ իր զաւակը»: Դարձեալ տէր Եփրեմը մէջ մտաւ. «Մի կին միայնակ սար գնացած էր շուշան քաղելու (աղաջրի մէջ դնելու հաստացողուն քանչար մի է՝ պահոց կերակոր, որուն վանեցիք մանդակ կրսեն) և այնտեղ իր ծնած տղան, քաղած շուշանի հետ միասին շալակելով տուն բերաւ, զոր մկրտելիս անուն Ծուշան կնքեցինք»:

### ԼԵ Զազիր<sup>135</sup>

Ամսոյս 2-ին հասանք Զազիր գիտ, որոյ բնակիչը 54 տարի առաջ 37 տուն, Գիղամրարէն և փոքր մաս մի զանազան գիղերէն այստեղ գաղթելով, այժմ 104 տուն զուտ հայ բնակիչներ եղած են՝ 437 արական, 369 իգական: Գիղին ունի մի եկեղե-



ԶԱԳԻՐ. հատված գյուղից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)

ցի՝ Ս. Աստուածածին անունով<sup>136</sup>: Գիղասահմանի տեղ լեռնադաշտ է, և ունի արգաւանդ հողեր, բայց զուրկ անտառներ:

Գիղացիք ունին լրիի և գետնախնձորի բահեղներ: Պտղատու ծառերէն աճեր են այստեղ ձորերի մէջ միայն թթենին և ընկուզենին: Խելացի մտածութեամբ մշակեր են և վայրի տանձենին, և խնձորենին, զի լեռնցի պատութեր լեռնային կեանքի դիրաւ կյարմարութին:

Գիղի տեսարանը զուարձալի կկացուցանեն ուղի և բարդի մշակուած ծառեր:

Հայոց վարժարաններ անցեալ 1884-ին ընդհանրապէս փակուելէն առաջ 2 տարոյ չափ ուսուցիչ ունեցեր է այս գիտ: Այն ժամանակ գիղիսի ժամասցութիւնը սովորեցնող վարժարան խափանուեր է՝ ընդհանուր վարժարանաց փակման պատճառով, որ և կտևէ մինչև ցայսօր: Ժամասցութիւնը կկատարէ միմիայն քահանայն, իսկ երբ պատճառագ ընելու հարկ լինի, Գառնակեր գիղէն կիրաւիրուեն դպիրներ, որք շատ անզամ գալու անկարող լինելու համար պատճառ կիսափանուի (ինչպէս իրենք ասացին): Աստուած, որոյ չխափանես «զայս արարէք առ իմոյ յիշատակ» քո աշխարհակեցոյց պատուիրդ...

Գիղիս արևելակողմ՝ մի վերստ հեռաւորութեամբ, կայ մի մատուու Կարմիր եկեղեցի անուամբ, որտեղ կդիմեն լրսնութեր և քամոս հիւանդներ: Եւ արևմտեան կողմ՝ 2 վերստ հեռաւորութեամբ՝ մի մատուու, որոյ մէջ կայ և տապան՝ Կենտ ծառ անունով, որը կդիմեն հիւանդներ:

Բարսում և Գառնակեր գիղերու բնակիչները իրենց կալատեղեր գնացած լինելու համար գիղերու մէջ գրեթէ ոչ ոք մնացեր, բացի տնանկ ծերունի այրերէն և պառա կնիկներէն, ուստի և քարոզ խօսելու, և կարգադրութիւն ընելու յարմարութիւն

135 Գտնվում է Շամխորի համանուն շրջկենտրոնից 16 կմ հարավ-արևմտուք (ծ. մ. բարձր է 1300-1420 մ):

136 Ծխական եկեղեցին ԺԷ-ԺԸ դր. կառույց է: 1985 թ. բաղն ամբողջությամբ փլեկ էր (մանրամասն տես Կարապետյան Ս., նշվ. աշխ., էջ 520-525):

չկար: Վասնորոյ յիշեալ գիտերու քահանայք, տանուտերեր, իրենց փոխմեր և իշխանաւորմեր (ինչպէս որ իրենք կըսեն համբա մարդիկ<sup>137</sup>) մեզ հետ կշրջէին Զագիր գիտի եկեղեցւոյ մէջ՝ քարոզ և խրատներ լսելու, որպէս թէ իրենց գիտերու կալատեղերու մէջ առ տնին խօսածներս քարոզ և խրատ չինէին:

Ուստի Զագիր գիտի մէջ մեր քարոզ ու խրատներ խօսեցանք՝ վարժարանաց վերականգնան համար մեր սովորական միջոց ցոյց տալով, այն է՝ կալեմաս հաւարել: Ըստ մեզ՝ վարժարանի համար այս միջոցը փող հաւաքելն աւելի յարմարագոյն է գիտացւոց համար, զի նոցա շրջանի մէջ սովորաբար հազիր փող կըտնուի: Զի եթէ 2 արասի փող ուղելու հարկ լինի, խիստ տհաճութիւն ցոյց կուտան, իսկ եթէ 2 արասի փոխարէն մի փութ ցորեան, որ 4 արասի կանէ, մէն մի փութն ուղելու լինեա, սիրով յանձն կառնեն: Պատճառն յայտնի է:

Զագիր գիտի եկեղեցւոյ մէջ խօսուած քարոզէն այնչափ զգացուեցան քարուումեցի և գառնակերցիներ (չնայելով, որ եկեղեցին դրւս մի քանի անգամ լսեր են աւելի ազդու քարոզ), դուրս գալուն պէս ուխտեցին գիտը վերադառնախս անմիջապէս կալեմաս հաւաքելու սկսեն ի նապաստ վարժարանին: Նոյնակս ուխտեցին և ջագիրցիր:

## L.2

### Գետարէկի ճանապարհին

Երբ կդիմէինք դէպի Գետարէկ, կէս ճանապարհին մեզ դիմաւորեցին տեղոյն գիտացի և քաղաքացի (որք տեղոյն պղճահանքի համար գիտաքաղաք կկազմէին) 50-ի չափ զինակուու երիտասարդներ՝ հայկական ոյրօշակով, որոնց կառաջնորդէր երիտասարդ և նորասէր Ծմաւոն քահանայն Բօրեանց:

Այնտեղ՝ մարգագետնի վերայ, սառնորակ աղբիրի գլխին պատրաստած ճաշն վայելեն զինի, սկսեց յառաջ խաղալ երիտասարդական զնացքը, որոյ ծիարշակի փոշին, մինչև գիտ հասնելը, շատ անգամ մեր ամբողջ կարաւան կծածկէր:

Մի քանի խօսք մեզ դիմաւորողներու շնորհիք մասին: Գետարէկ գիտէն մեզ դիմաւորող հեծեալներ իրենց ծիարշակի զանազնանակերպ կիրք խաղերով մեզ կուրախսացնէին ու կզարմացնէին: Մերք իրենց արագածեռն զինավարժութիւններ կներկայացնէին, իրենց կրած զէնքերի փոփոխ գործածութեանք, ըստ պահանջին, ըստ տեղոյն, մերք որպէս թէ թշնամի մօտեցած լինի, իրացան ուսին անցնելով, ատրճանակ կզործածէին: Մերք՝ որպէս թէ իրարու հակառակորդ թշնամի իրարու աւելի մօտիկցած միջոցին արագածեռնորդեամբ ատրճանակն

գոտիի տակ անցնելով, սուր հանած, ճապուկն դարձուածքներով իրարու վրայ կյարձակէին: Միոյն բարձրացուցած սպառնացող սրի հարուածէն ազատուելու համար միւսն դիրաքեկն շարժմանք, ծիու աջ կողմէ ի ձախն, ձախէն ի յաջն և փորի տակն անցած, սրի հարուածն վրիպեցնելով, ինըն յանկարծ կրկին ծիու մէջքին նստած հակառակորդին հարուածներ կուտար՝ ծիէն վայր ձգելու, սպանելու:

Եւ երբ այս ամէն տեսնալով սաստիկ զգացուած մեր մտքի մէջ կնկարագրէինք այդ ազգօգուտ և հոգեգրգի խաղեր՝ ցոյց տալ ընթերցողին հայու շնորհիք և ճարպիկորին, որ այդ խարտեալ և սևաթոյր գանգուր մազերով, կրակ ու բոց աչքերով, ճկուն կազմուածքով երիտասարդներ գործեցին իրենց թերեւ թարով, ճոխարշաւ ծիերու վրայ... ափսուն ու, որ նոցա մի անվայել արարք սառն տրամադրութեան ներքև ձգելով զի՞ւ մտակապ ըրաւ նկարագրելու: Ինչո՞ւ և մինչև ցայժմ չեմ կարող նկարագրել, զիտէ՞ս, հետաքրքի՞ր ընթերցող, երբ մեր և մեզ դիմաւորողներու մէջ սիրալիր ողջունի և զերմեռանդութեամբ աջ համբուրելու ազգային յատուկ սովորութեան փոխադառութիւններ կատարուեցան՝ աղբիրի գլուխ, բնուրեան կանաչ գորգերու վրայ մեզ բազմեցնելու ամէն կարգ ու սարք կատարեցին, զմեզ աւելի և աւելի գոհ ընելու նպատակով, այնուհետև ի՞նչ ընեն, որ հաւնիս, ընկերասէ՛ր ընթերցող... Քաղաքացիներ, զատուելով գիտացիներէն, ուրիշ երախան կազմեցին, գիտացիներն ուրիշ, մենք՝ հոգնորականներս, երեսփոխաններու հետ, յակամայից ուրիշ երախան մնացինք: Իրաքանչիր երախան՝ իր պարզած սեղանափողի վրայ իր թերածը կերաւ, իր առանձին սեղանակցի կենաց խմեց, երգեց, օտար ազգի պէս իրարմէ զատուած պահը և օրոնց բնողներուն յատուկ խորշումով, իրէից և հեթանոսաց խորութեամբ: Այս բաժանումն տեսնալով՝ իմ հոգին խորված էր: Զայրոյրէս այլևս չէի ուզեր նայել ինձ սիրելի երիտասարդական այդ ակմիքն վրայ: Պահ մի առաջ իրենց ցոյց տուած շնորհի չէի ուզեր մտարերէ: Մինչև զրիշ ծեռքս առած ժամանակն անգամ չեմ ուզեր ոչինչ խօսել նոցա վերայ, բայց անոնց միջէն մի յոյժ կարի ծիարշակ երիտասարդի կրքութեան վերայ փոքր ի շատ տեղեկութիւն չտալ՝ մեղանչել է:

Չիարշաւական հանդէներու մէջ ես հազարաւոր ծիավարներ տեսած եմ ժամանակին, բայց սուր նմանին չէի հանդիպէր: Վերոյգրեալ երիտասարդաց ծիարշաւական և զինավարժական խաղակութեանց կատարելագոյնն էր սա՝ զանձակեցի Արգար Լաշինեանցն: Ինքն իր ծիեն, ծին իրմէն վարդ: Զին իր հեծեալի տակ, նորա ամէն մէկ շարժման նպատակի նշանակութիւն գիտնալով հանդէր և մտափորտեամբ կարշաւէր՝ տիրոցն նորանոր ցոյց տուած նշաններուն ծառայելու: Հեծեալն գիտես թէ ծիարշակի միջոցին ծիէն բաժ-

<sup>137</sup> «Համբա մարդիկ, այսինքն՝ առաջին կարգի հարուածներ, որ առաջնակարգ հողատերեր են և առաջնակարգ հարկ կվճարեն» (Ծնք. Ինդինակի):

նուած օդի մեջ սաւառնող մի հրեշտակ էր: Յան-կարծ ինքն ձիու տակ, ձին իրեն տակ, աչէն ի ձախ, ձախէն ի յաջ շրջող ճախարակի անի կդառնար: Փոքր ասպարեզի մեջ փախչող թշնամոյ ետևէն կհասմէր, մէկ ոտն իր ձիու ասպանդակի մեջ քողած, իսկ ինքն յանկարծ թշնամոյ ձիոյ գաւակին հեծած կտեսնայիր, ձին թշնամոյ ձիէն անբաժան հաւասար զուգընթացութեամբ արշաւելով: Ինքն թշնամոյ ետևէն նորա թեր պարաւանդել<sup>138</sup> կսկսէր կամ դաշյոն քաշած՝ նորա կողին մեջ կմխտէր, եթէ չկամենար թշնամին կենդանի բռնել: Ես, զարմացման մեջ ընկղմած, մտքիս մեջ գոչեցի: «Աղասի՛, կենդանացի՛ր, տես, քո որոնածներէն մինն քիչ մատնացոյ անեմ, որ Հասան խանի սիրու կրծքէն դուրս քաշէն քեզ քաւազա անելու<sup>139</sup>»:

### ԼԵ ԳԵՏԱՊԵԼ<sup>140</sup>

Ամսոյ 3-ին, Զագիրէն ԳԵՏԱՊԵԼ գիլ հասնելով, իշխանեցինք Տէր Ծմատնի<sup>141</sup> տանը: ԳԵՏԱՊԵԼ կրաղկանար 44 տուն զուտ հայ ընակիշներէ՝ 178 արական, 149 իգական: Սոցա սահմանի մեջ կայ պղնձի հարուստ հանք, որ 20 տարի առաջ գերմանացի Սիմէնս անուն մի անձնաւորութիւն կապալով մեր առած է տեղական իշխանութենէն և իրահալելու համար գործարան հաստատեր է յիշեալ գիւղատեղոյն մեջ<sup>142</sup>: Ուստի գետարէկցիք պարտաւորուած քող տուեր են իրենց հայրենական գիւղատեղի շինութիւններ, եկեղեցին և գերեզմանոց և զաղթեր են 2 վերստ հեռող՝ նոր գիւղատեղոյն վրայ ընակավայր հաստատեր են՝ իին գիտի անունը նորի վրայ կնքելով: Հին գիւղատեղոյն գերեզմանոց և եկեղեցին սեպհականութիւն մնալով գիւղացցոց՝ նոյն տեղ կկատարուեն իրենց հոգևոր պէտքեր: Ցիշեալ եկեղեցին փորդիկ և կամարակապ է՝ Մ. Գէրգ անուամբ, որ շրջապատած է ընդարձակ գերեզմանոցով:

Պղնձահանքի գործարանի կառավարիչ բարեկիրք Պոլտօն անձը չի խղճահարեր մեր ազգային գերեզմանոցի եզերքներ քանդել և ննջեցելոց կմախքներ դուրս բափել, խանութներ շինել տալ այս ու այն վաճառականներուն, խանութավարձ առնելու համար, որով իր իրաւանց սահմանից դուրս գալով՝ մեր ազգային սրբավայր կպղծէ՝ մի ամբողջ ազգի սիրու վիրաւորելով:

Բաւական ժամանակէ ի վեր Գանձակու Հայոց հոգ. կառավարութեան իրամանով ԳԵՏԱՊԵԼու

138 Կապել, շորայել:

139 Հյուրասիրել, մասուոցել:

140 Հանաւոն շրջամի կենտրոնն է: Գտնվում է Գանձակից 48 կմ, Շամիրից՝ 35 կմ հարավ-արևմուտք (ծ. մ. բարձր է 1380-1500 մ):

141 Ծմավոն Բորյանը քահանայագործել է 1890-1903 թթ. (Կառապետյան Մ., նշվ. աշխ., էջ 76):

142 «Սիմէնս» ընկերութեան մասին մանրամասն տես նշվ. աշխ., էջ 69-71:

Ծմաւոն քահանայն դատ կվարէ յիշեալ կառավարչին հետ: Քահանայն խանութներու շինութենէն առաջ զգացուցեր է կառավարչին, թէ իր այդ մտադրեալ ձեռնարկութեամբ հայոց կրօնական զգացումներ վիրաւորած կինին: Ի՞նչ արժանավայել պատասխան կյուսաս, կրօնասէ՛ր ընթերցող, այդ քաղաքակրթեալ անձի դրամախոհութենէն ու «Առաջուց խօսք տուած իմ խանութպանին, ուստի չեմ կարող խօսք յետ առնել»:

Ի՞նչ զարմանալի իրաւագիտութիւն: Այլոց իրաւունք կողովածել փոքր տնարդութիւն կհամարէ, քան իր անիրաւացի բանատուութեան յետ առնել: Յիշեալ քահանայի ըսածին նայելով՝ նոյն պարոն այժմ որպէս թէ գղջացեր է և կառաջարկէ քահանային, թէ «Գերեզմանատեղոյն վրայ շինուած խանութներու վարձ ես կառնեն, իսկ նոցա գետնավարձ դուրս ստացէք», այս է բերանացի խստումով... Ի՞նչ մանկական խաղ: Այնուհետև յիշեալ քահանայն, ճարահատ լինելով, ննջեցելոց կմախքներ կրոցի մեջ ժողովելով, կդնէ եկեղեցոյ խորանի մեջ իրեւ ապացոյց և ապա կսկսէ դատ բանալ կառավարչի դէմ և պատիժ կպահանջէ մարմնաւոր իշխանութենէն՝ նոյն սրբապնութեան համար: Իսկ դատաւորն քահանային պատասխաներ է, թէ «Գերեզմանմեր շատ իին լինելու համար չարժէ դատ վարել և վիրաւորել կառավարչին»: Առ այս հարց է առաջարկեր Ծմատն քահանայն, թէ որչա՞փ ժամանակամիջոց գերեզմաններ հինցած և իրենց յարգ կորսնցուցած կհամարուին օրինաց առջև: Սոյն խօսքին դիմաց դատաւորն տարակուսեալ և պարտասեալ կիրկնէ՝ դարձալ ի պաշտպանութիւն կառավարչին, ոչինչ, չարժէ: Այսպիսի դատաւորաց համար է մեր նախնեաց առածն, թէ «Ուր ոսկին բարբառ է, անդ ամենայն լեզուք լրին»: Այս առածն ի հարկէ մասնաւոր մարդկանց համար լինել կարծած էինք և չինք յուսար, որ օրինաց արդար լեզուն ևս կխոնարիի և կլու ոսկոյ բարբառի առջև:

Հին ԳԵՏԱՊԵԼի մեջ գործարան հաստատուելու պատճառաւ բաւական քուով գանձակեցի առևտրական հայեր կան այժմ: Սորանց հոգևոր պէտքեր ևս կմատակարարէ յիշեալ Ծմատն քահանայն, որ այս կողման հայ ժողովրդաց մեջ նախանձելի ժողովրդականութիւն կվայելէ: Նոր ԳԵՏԱՊԵԼի հայեր սակաւարի լինելու պատճառաւ չեն կարող վարժարան բանաւ, բայց ոմանց որդիք ժամասացութեան համար կպատրաստէ յիշեալ քահանայն:

Գիտի արեւելահարաւ կողմ կգունուի ուխտատեղի մի՝ խաչքար՝ Կաղնախաչ անունով, որուն կինքանաւորէ դարձեալ մի իինաւորց և մեծ կաղնի ծառ: Երկրորդ ուխտատեղի մի ևս կայ գիտի հարաւային կողմը՝ մի վերստ հեռաւորութեամբ, բյալի գլխին: Սա ո՛չ խաչ ունի և ո՛չ այլ ինչ, բայց մի փորդիկ շինութեան վիլատակ՝ Ղուտրի անուն: Սորա ուխտատեղի լինելու գոյութիւնը արդիւնք է եղեր երազաւեսութեան:

## ԼՇ

### Ղալաքեանի<sup>143</sup>

Օգոստոսի 5-ին թող տալով Գետարէկ գիտը՝ տեղոյն քահանայի առաջնորդութեամբ՝ Ղալաքեանդ անոնով թքքարնակ գիտի հին թերդի<sup>144</sup> գլուխ քարձրացանք, որ շրջապատուած է ամրապինդ պարիսպներով և մարտկոցի բուրգերով: Սոյն թերդի ի հնում մեր նախնիք կառուցեր են՝ ի պաշտպանութիւն նորա ստորոտ գտնուած՝ Ղալաքեանդ գիտաքաղաքին: Գիտաքաղաք կրտենք, որ կսուզուի իր մէջ գտնուած թէ՝ կանգուն և թէ՝ կործանուած վեց եկեղեցիներով<sup>145</sup>:

Գետարէկի պղնձահանքի արտադրութեան մի մասը 2 ժամու հեռաւորութենէն երկարութիւնով կրերուի այն գիտ՝ հրահալելու, զի այն տեղ ևս գործարանի մի ճիւղ հաստատուած է անտառի մօտաւորութեան համար:

Բայց մենք չմոռանանք մի միջնարդեալ յառաջ թերելու: Փիր գիտի հրահալակողման անտառախիտ լեռան, որ պինդ ապառաժ քարից կրաղկանայ, նորա վերայ շատ ծակ քարեր կտեսնուին՝ զանազան լայն ու նեղ ճներով և առանց պատառուածք ունենալու, մարդ կլարծէ, թէ հաստ թղերով ծակուած լինեն: Այդ քարերու ծակ լինելու մասին հարց քարձրացաւ մեր այնտեղ եղած ժամանակ, թէ ի՞նչ պատճառաւ այդ ծակեր գոյացած են: Մենք տարակուսուած կանգ առինք մեր մտախուզման մէջ Քսանթոս փիլիսոփայի նման: Եւ որովհետև Եզրվասի նման մի ծառայ էլ չունինք, որ հարցն անոր յանձնելինք լուծելու, ուստի և հարցն մնաց անլուծելի, մինչև Ղալաքեանդ գիտի թերդ քարձրանալն:

Սորա նոյնատեսակ ապառաժները նոյնատեսակ ծակեր ունենին, ինչպէս Փիր գիտինը:

Յիշեալ թերդի լեռան լանջի վերայ, թէպէտ այժմ քնաւ անտառ չի տեսնուիր, բայց ստուգուեցաւ, որ առաջուայ ժամանակ անտառ եղած է այնտեղ, և անտառի ծառերն քարերու վրայ բուսած և նոցա արմատներ քարերին ծակելով խոր իջած են, հետևագիս որչափ որ ծառեր հաստացած են, հետքին և քարածակերը մեծցած են ծառերու հաստանալու չափով: Զի մենք տեսանք այնտեղ մի արշին շրջագծի լայնութեամբ վերոյիշեալոց նման ծակ քար, որուն մէջ տակաւին կմնար հին ծառի փտած բունք լաս որպիստիւան խոտածածկին, և այն քարածակն շունէր պատառուածք: Մենք այսպիսով համոզուած ենք, թէ՝ Փիր գիտի և թէ՝ այստեղաց ծակ քարեր պատճառուած են ծառերու արմատներէն:

## ԼՇ

### Չարեքայ վանք

Օգոստոսի 5-ին Ղալաքեանդէն հասանք ի Չարեքավանք՝ 5 ժամէն աւելի ճիու վրայ նստելով: Չարեքայ վանք շինուած է Չամքոր գետի ձախ ափին՝ խորագոյն ծորի մէջ, որ արևմուտքէն արևելք երկարացած է: Վանքն ամէն կողմէն երկու ժամու ճանապարհաւ հեռու է ամենայն մարդաբնակութենէ և դրացիական օգնականութենէ: Ի հնումն միաբանական ուխտի տեղ եղած է, որ կգուշակուի հիւսիսային և արևելեան կողմի վրայ եղած տասն և հինգ միաբանական կանգուն մնացած խուցերէն՝ ի բաց առեալ քանդուածները: Եկեղեցին, գաւիթ, դարպաս և մեկուսի զանգակատուն նոյնպէս և խցերն, տնտեսատուն, մառան, փոռատուն և սեղանատուն քարուկիր և կամարակապ շինուած են մէկուկէս թիզ երկարութեամբ և մէկ թիզ լայնութեամբ նեղ լուսամուտներով: Սեղանատուն 32 արշին երկարութիւնէն կիասկացուի, որ վանքն բազմաթիւ միաբանութիւն ունեցեր է իր ճոխ ժամանակին, իսկ այժմ ունի միայն մի վանահայր՝ արժ. Աստուածատուր փարուղաետն Տէր-Յարութիւնեանց, որոյ մականունը շրջակայ գիտօրէից պարսիկներ Քօռ-օղլի դրած են իր արի անձնապաշտպանութեան և վանքի և նորա անտառներու պահպանութեան համար:

Վանահայրն առանց վանաորդի փարուղապետներու ունի միայն երկու ծառայ և մի անտառապահ, ընդամենա չորս անձիքներ կրաղկանան վանքի ամբողջ բնակիչներ, չըսեմ միաբանութիւն: Ինչպէս վերև ըսինք, վանքն, 2 ժամու ճանապարհաւ հեռու լինելով մարդաբնակութենէ, յանդուզն անձնապատճառութիւն է 4 հոգով բնակել այսպիսի անպաշտպան և անապահով վիճակի մէջ, զի վանահայրն վայրենութեանց վայրենութեան տեղի է, որ աւելի աշխիծներու յարմար է, քան այսպիսի սակաւարի մարդկանց բնակավայր լինելու:

Ուսաստանի հայոց վանքերու մէջ միայն Սևանայ անապատ վանահայրական անուն կրելու իր խկական նշանակութիւնն ունի, զի վանահօր հովանատութեան և խնամոց ներքը կգտնուին և վանական որդի վարդապետներ, որոնք ամէնքն ի միասին իրքն ժառանգ նոյն վանական հաստատութեան ամէն ջանք և աշխատութիւն ի գործ կդնեն վանքն չեն պահելու, ճոխացնելու, և հարկ եղած ժամանակին կկարկատեն և կնորոգեն իրքն իրենց ժառանգութիւնն:

Այսպէս են Տաճկաստանի հայոց գլխաւոր վանքեր, որք ունեն վանականութեան կանոնական օրէնք: Կյիշեմ Վարագայ և Տարոնի Ս. Կարապետի վանօրէից կանոնագրութիւն, որ քարտեզի նման շրջանակի մէջ առաջ կախեր են վանահօր սենեկի պատէն՝ իրքն յիշեցուցիչ վանահօր և միաբանութեան պարտուց և իրաւանց փոխադարձ յարաբութեանց կանոն: Կարծեն թէ Ս. Էջմիածնի Մայր Աթոռ տակաւին չէ ունեցեր ազգային սոյնակիս

<sup>143</sup> Գտնվում է Գետարէկի շրջկենտրոնից 11 կմ հարավ-արևմտուք՝ Չամքոր գետի ծախ վտակի Փախստով ափին:

<sup>144</sup> Համապատասխանում է Փախստու թերդին. մանրամասն տես՝ Կարապետյան Ս., նշվ. աշխ., էջ 127-128:

<sup>145</sup> Սամվել Կարապետյանը 1982 թ. արձանագրել է միայն երկու եկեղեցու գոյուրյունը (նշվ. աշխ., էջ 127):



**ԳԵՏԱՔՐԵԿ. Չարեքավանքը (լուս.՝ Ա. Օհանյանի, 1980-ական թթ.)**

սահմանադրական օրէնք՝ բացի բոլոժէնիայից, որ ցոյց տայ հովուողի և ստորադրելոց պարտու և իրաւանց փոխադարձ սահմաններ:

Հետևապէս և նոյն Մայր Աթոռի ստորադրեալ վանօրայք ևս չունեն մասնաւոր, իրենց համար կազմուած կառավարչական օրէնք, հաստատուած հոգինոր ծայրագոյն իշխանութենէ, որպէսզի վանականութիւնը իր ամփոփ և պարզ օրինաց ուղեցուցի առաջնորդուէր միակերպ կառավարութեամբ՝ վանուց յարաւուութեան համար:

Տաճկաստանի գլխաւոր վանօրէից հաստատուն և յարատն մնալու պատճառն ինձ կրուի այն է, որ ունեն միարանական ուխտ, ուխտին վանահայր և կանոնական օրէնք: Եթ երբ վանահայրն վախճանելու լինի, միարանութիւն իր միջէն կամ դրսէն կրնտորէ յաջորդող վանահայրն, իբրև իր հովի և վանական օրինաց օրինապահ և գործադրիչ, իսկ ինքը՝ միարանութիւն, կլինի կամաւոր կատարիչ օրինաց և վանական հնազանդ որդի վանահորն, և ամէնքն ի միասին, վանահայրն և վանադրիք զինքեան հարազատ ժառանգ կիամարեն նոյն միարանական ուխտին:

Այսպէս եղեր է և է Վարագայ վանք («մայրաքանակ մենաստանաց») ըստ Զամշեան պատմութեան, որ երեմն ունեցեր է ուրն հարիւր միարանական եղբայրութիւն), Լիմ և Կոտոց անապատներ Ս. Բարդուլիմէոս առաքելոյ և Սեծոփայ վամբեր, Տարոնյ Ս. Կարապէտի, Ս. Յովհանու և Թարգմանչաց<sup>146</sup>, Արմաշու վանքեր, որոնց ամէնու մէջ կան

ժառանգաւորաց վարժարաններ<sup>147</sup> մի որոշ նպատակի ծառայելու համար:

Ո-ուսաստանի հայոց բազմաթիւ վանքերու միարանութիւն կրաղկանայ մի վարդապետէ միայն, որ և վանահայր անուն կլրէ՝ առանց վանառդի ունենալու և կրնտորի ու կհաստատուի Ս. Էջմիածնի հոգ. բարձրագոյն իշխանութենէ, այն էլ շուտ-շուտ փոփոխուելու ենթակայ: Բնական է, որ այսպիսի վանահայր չի մտածեր վանքն բարեզարդել, ճոխացնել, քանիուածներ կարկատել և նորոգել, զի վանքն վարդապետի տուն (ըստ հայրենի առած են) լինելու ապահովութենէ դուրս եկած է: Ուստի այս իսկ պատճառաւ անտարակուսելի է, որ վանքեր միշտ քանդուելու և անհետանալու ենթակայ կլինեն իրենց ստացուածքով, հողային կալուածներով և սրբազն անօրներով: Քանիուած և իրենց կալուածներով ի միասին անհետացած վանքերու օրինակներ շատ են մեր աշքի առաջ: Ո՞ւր է վանքերն հսկայն Սաղմոսավանք և նմանիքն, ի՞նչ վիճակի մէջ է Արտազու Թաղէոս Առաքելոյ վանք, որ վանօրէից մէջ հսկայից հսկայն է իր բերդանման շինութեամբ, ուր երեմն կպատրաստուէին Ս. Էջմիածնի առաքելական յաջորդ գահականներ, ո՞վ է նորա վանահայր: Վանքին շրջապատող 11 տունէն բաղկացեալ հայ գիւղի մէջ ծնած, սնած, զարգացած մի հայրենասէր վարդապետ՝ աղքատ և թշուառ, որ ամիսներով առանց վամբ մտնելու, խունկ ու մոմ վառելու կրողու Հայաստանեայց աշխարհի նախկին լուսաւորիչ Թաղէոս առաքելոյ սրբակիր գերեզման, զի վանքն ոչինչ չունի: Վանահայրն հազի հայ ապրուստը կգտնայ իրանման թշուառ աղքատ հայրենակից գիւղացիներէն:

146 «Թարգմանչաց, որ և Ղազարու և Առաքելոյ անուանեալ վանուց տաճարի դրսի արևելակողմն կգտնուին մեր ազգալոյ բարգմանչաց Դաւիթ Անյադր փիլիստիքայի, Մամրէ Վերծանողի, Եզմիկ Կողբացոյ և այլոց պատկառելի շիրիմներ, որոնց մահարձաններ 4 կանգուն բարձրութեամբ կանգնած են 2 կանգուն բառակուսի մեծութեամբ պատուանդաններու վրայ, իրենց նորը (բարգմանչաց անուան վայելու) բանիքակաղործութեամբ, գողգորայի հսկայ և հրաշատեսի խաչերով և տապանագրութեամբ: Եթ արդարն տապան և ոչ գերեզման բարգմանչաց, որը իրենց անման յիշաստկա և ուկեղենիկ գրչով կան և կմնան տապանի մէջ, ցերկորորդ գալուստ Քրիստոսի, ի յանդիմանութիւն մեզի պէս վանականաց չափացախ եղեգնագրչին» (Ժնք. հեղինակի):

147 «Ըստ իմ դատողութեան՝ մեր նախնեաց գործածած վարժարան և վարժապետ անուններ շատ իրաւացի են արդի գործադրած «ուսումնարան և ուսուցիչ» անուններէն, որ կարծեմք, ուրիշ ազգերէն բարգմանաբար առած կգործածնն: Վարժապետն իր գիտութիւնը ուրիշէն առած և վարժուած՝ կվարժեցնէ աշակերտներուն, բայց ուսուցիչն ինքնապէտ պիտի լինի, որ ուսուցան, ինչպէս տիեզերաց ուսուցիչն Յիսոս կաստուիրէ իր աշակերտաց միջոցաւ մարդկային ազգի, ոչ զոր ուսուցիչ չկոչել, բայց յինքնէն:» (Ժնք. հեղինակի):

Ուստահանի վաճրերէն ոմանք թէ՝ ուխտատեղի են և թէ՝ հոդային կալուած ունին, սակայն դարձեալ չեն ճշխանար, որովհետև չունեն վանական ուխտ և ուխտի հաստատութեան օրէնք: Թէպէտ ոմանց վաճորէից ջերմեռանդ հաւատաւրաց նուէրներու մի փոքր<sup>148</sup> մասն կընծայուին անդամ եղող վաճրերու կողմանէ՝ ի շահ Ս. Էջմիածնի Մայր Առողին, իրի վաճորէից զիսաւորին, որ շատ իրաւացի և պարտաւորիչ օգնութիւն է: Բայց միքէ նոյնպէս զիսաւոր վաճքն ևս իր կողմանէ չպէտք է, որ հոգաւարութեամբ սնուցաներ և դարմանէր իր խնամց ենթարկուած անդամ եղող վաճորայքը: Ինչպէս արին, սրտէն ելնելով, կմտնայ միւս արին երակներու մէջ և կանդրադառնայ ի նոյն տեղ՝ կենդանացուցիշ շրջան կազմելով, այնպէս և Ս. Էջմիածնը փոխադարձական պարտուց և իրաւաց ճանաչմամբ թէ՝ մասնաւորապէս կօրուացնէր և թէ՝ ինքն զիսաւորապէս կամրապնուէր:

Ուրեմն ի՞նչ են Ուստահանի արդի վաճորայք, և ո՞ւմ կծառայեն նոցա կալուածներ: Ոչ այլ ինչ, եթէ ոչ միայնակեցարաններ, որք կծառայեն անհատական անձանց՝ հակառակ նախնական կանոնաւրեալ վաճորէիցն, որք կծառայէին եկեղեցւոյ ժառանգաւորացն: Օրինակ՝ բարեհոչակ Սանահին, արդինաշատ Հայրաւ, զինու հոգուոյց վառեալ Տաթև և սոցա նմաններ կպատրաստէին զանազան կարգի հոգևորականներ հայոց ժողովուրդն լուսաւորելու, առաջնորդական, քարոզական, կրօնափրական և հայրենասիրական հոգույ ներշնչութեամբ:

Սոյն մտախոհութեանց առիթ տուաւ Զարեքայ վանուց այժմեան անկեալ դրութիւն, զոր վերականգնելու համար նորա արդի վաճահայրը՝ արժ. Աստուածատուր վարդապետ, ծշմարիտ և անձնանուէր վաճականութեան հոգուով, տասն և վեց տարիէ ի վեր երկարի պնդութեամբ ամէն կերպ չարքաշուրինը յանձն առած, ամենայն անձնանութրութեամբ կաշխատէ վաճքի յափշտակեալ հոդային կալուածները՝ արտօրայք և անտառներ, վիճելութեան վիճակէն դուրս բերել և հաստատել տալ վաճքի վրայ, վաճքի նախնական հանրօգուտ նպատակն վերականգնելու:

Երկար ժամանակէ ի վեր վաճքին մէջ միաբանական ուխտ չի լինելու պատճառաւ (բացի մի վաճահայր վարդապետէ) տաճարն իր բոլոր շենքերով խօրթացած է: Ուրտեղ մի փոքր վնասուած է եղեր, առանց կարկատելու և նորոգութեան մնալով՝ մերձ ի մահ խարիսալուած է անչափ, որ այսուիւն կարկատելն օգուտ չի բերեր և չի փրկեր վաղահաս մահուանէն, ինչպէս մեծաշէն Սաղմոսավանք

և այլ սորա նմաններ փրկուած չեն եղեր՝ ժամանակի վաճահարց անհոգութեան պատճառաւ:

Քանի՛ հոյակապ վաճրեր զիտենք, ինչպէս Էջմիածնի մօս Մուղնու Ս. Գէրգայ վաճք, որ կողահերձ լինելով՝ թիշ ժամանակի մէջ կկործանի: Կկործանին և միւսներ, շնորհի անհոգութեան միայնակեաց վաճահայրերուն:

Սոյն ժամանակներ հայ լրագրութեանց մէջ աղմուկ բարձրացաւ, թէ Զարեքայ վաճից վաճահայր Աստուածատուր վարդապետ վաճքի անտառներ այնչափ փչացուցեր է և կիշացնէ, որոյ մէջ շրջագայող զազաններ ակներս կտեսնուին, և թէ, եթէ վաճքն շուտով նորա ծէռքէն չառնուի, անտառներն իսպան կանհետանան:

Սոյն շբնուած լուրը տուողներ արժանահաւատ անձինք համարուելով՝ վաճահայրն փոխուեր և ուրիշն նորա տեղ յաջորդեր է, որ իր անհոգութեամբ և ապիկարութեամբ անտարի մի մասն էլ սեպականութենէ յափշտակուեր է և այնուիւն տեսնելով, որ տեղույն անօրէնք և անպրօկուրօ սար ու ձորերն իր պահպանելու, կարողութենէն վեր է և չի պիտի կարողանայ առ երկիւի երկար մնալ սոյն վաճուց մէջ, թիշ մի ևս աւելի շտապեր է իր ընելիքն ընելու և փոխադրուելու:

Հոգ. ծայրագոյն իշխանութիւն, այսուիւն ի փորձոյ վերահաս լինելով Աստուածատուր վարդապետի արժանաւորութեան վրայ, կրկին վաճահայր հաստատեր է: Սենք, այցելելով սոյն վաճքը, 8 աւոր շափ մնացինք, հետազոտեցինք անտառն, ոչինչ համաձայն՝ այն մեծ աղմուկին չգտանք, բացի վաճքի առջև եղող պարտեզատեղիի կոտորուած ընկուզեններէն, որ շատ լաւ հաշուով կտրատել տուեր է: Տեսնելով արդի վաճահայրն, որ բոլոր ձորի բազմաթիւ ընկուզեններով լի են, բանջարանցի ընկուզենիքը կոտորեր և բանջարանցն ընդարձակեր է (զի վարելահող շունի), ուր վարունկ, գետնախնձոր և լուրիս կցանե, որոնց բերք ամէն օր ի վաճառ կհանէ ի Գետարեկ՝ վաճքի ապրուած հոգալու: Մանաւանդ որ ամրող անտառն տակաւին վիճելի լինելով տէրութեան հետ՝ իշխանութիւն ևս անտառապահներու հսկողութեան ներքև պահպանել կուտայ: Ուստի վաճահայրն կարող չէր անտառն փչացնել:

Վաճքիս արևելեան կողմը՝ մերձ ի պարիսպ, Հայոց գերեզման անունով մատուր մի կայ, որ շինուած է վաճքիս հինգ ճգնազգեաց վարդապետաց գերեզմանի վերայ, որոյ քարուկիր կամարի դրսի կողմը քանդամ են բարձր կոչում ունեցող մի եկեղեցական և մի աստիճանաւոր, որ Գանձակէն այստեղ եկեր էին՝ բախտ որոնելու, բայց դժբախտաբար բախտ չգտնելէն յետոյ նոյն քանդուածն շինել տուած չեն, որ կմնայ ցայսօր ժամանակի ի նախատինս և վկայ իրենց բախտախնդրութեան: Դարձնեալ և մօս ժամանակներս, նոյնպէս բարձր կոչում ունեցող մի հոգևորական, Գանձակէն գալով, բանյացուներ պատրաստելու» (Ժնք. հեղինակի):

<sup>148</sup> «Ուստահարա նուիրաբերութեան մեծ մասն և կարտածոց արդինք կծառայեն անհաստատ վիճակ ունեցող վաճահայրերուն և ոչ վաճական ժառանգաւորներուն, որպէս ի հնումն, ժողովրդեան քարոզիչ վարդապետներ և քահանայացուներ պատրաստելու» (Ժնք. հեղինակի):

դեր է վանքի տաճարի տանիքը՝ նոյնախսի շահասիրութեան պատճառաւ, և ինքն էլ շարաչար վիրատրեր է նորս քամակը: Վանքից 2 վերստ հեռաւորութեան՝ նոյն արևելեան կողմը, գետի ձախ ափին, մի քարաժայոի գլխին, բրծեալ աղիսներով շինուած, կայ մի պարսպաբերդ՝ Նամրուր անունով, որոյ պատեր ցայսօր կանգուն կմնան:

Վանքին հարաւակողմը՝ 1/4 վերստ հեռաւորութեան, գետի աջ ափին, շինուած է մի փոքրիկ կամարակապ եկեղեցի, որոյ շորջը կզտնուին բազմարի բնակարանաց աւերակներ: Ոչ մի առանձին նշաններով յայտնի չեղաւ, թէ գիղատեղի՞ է այդ վայր, թէ՝ վանքին միայն միարավանաց ճգնաւորական մասի աղօրավայր, միայն նոյն տեղ կզտնուեն իրարու կից շինուած վեց քարուկիր ամրապինդ սենեակներ՝ առանց լուսամուտի, չորս արշին քառակուսի մեծութեամբ, որոյ բոլորակ կամարները ընկած են: Սոցա միայն արևելեան պատի մեջ կտեսնուի կրաշաղախով ամրապնդած խողովակներ, որը կարծել կուտան, թէ ի հնումն բաղանիք եղած են: Սոյն վայրի համար կաւանդեն, թէ կուտանոց եղած է. թերևս նոյն բաղանիք մաքրասէր կուտանաց ծառայած լինի:

Վանքի արևմտեան կողմը՝ երկու վերստ հեռաւորութեամբ՝ գետի աջ ափին, բարձր բլրակի գլխին, կտեսնուի բարական մեծութեամբ եկեղեցի, որոյ վրայի կարուղիկի կէսը փլչած է: Նոյնպէս վանքի հիւսիսակողմ՝ 3 վերստ հեռաւորութեամբ մի բարձրաւանդակի վրայ, կզտնուի մի եկեղեցի, որոյ առաստաղը և մի պատ խոնարհուած են:

Դարձեալ վանքի սահմանի մեջ՝ արևմտակողմ՝ 3 վերստ հեռաւորութեամբ, Այրալայ գետակի մօտ, կզտնուի հանքային երկարի ջուր, որ բափունվ Այրալայ գետակի մեջ, եկուր ի միասին կօժանդակեն Շամքոր գետին: Սոյն Այրալայ անունով գետակի բլիման մօտեր կզտնուի Այրալայ անունով մի վանք, որ թէպէտ վանքի սահմանից դուրս է, բայց անոր համար կնշանակենք այստեղ, որովհետև կաւանդեն, թէ Այրալայ սարկաւագ նոյն տեղի բնակիչներէն է:

## Խ

### Զարդախսու

Ամսոյ 13-ին Զարեքայ վանքէն մեկնելով՝ մի գիշեր օթեցանք Գետաբէկ գիղը՝ դարձեալ տէր Շմատնի տանը և այնտեղից 14-ին հասանք ի Զարդախսու գիղ<sup>149</sup>, որ կրաղկանայ 202 տուն զուտ հայ բնակիչներէ՝ 753 արական, 561 իգական, որ Տփխիստէն այստեղ գաղթեր են 1822 բուականին:

Գիղն ունի մի նորաշեն եկեղեցի՝ *Ս. Աստուածածին*<sup>150</sup> անուամբ, և մի քահանայ, սոյնպէս և մի



ԶԱՐԴԱԽՍՈՒ. Արք. Աստվածածին եկեղեցին հարավ-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)

նորաշեն վարժարան, որուն մեջ կուսանեն 45 աշակերտ: Երկուքն էլ օրինակելի են իրենց գեղեցկութեամբ:

Գանձակու 23 գիղօրէից միայն 4-ի մեջ կզտնուեն եկեղեցական ծխական վարժարան, չորսն էլ միդասեան, թէպէտ և բաղկացեալ երեք-երեք բաժանմունքներէ, բայց դժբախտաբար մի-մի վարժապէտ ունենալու պատճառաւ բոլորն էլ ապարդիւն կմնան: Ի շարու նոցա՝ և գիղիս վարժարան ապարդիւն մնացած է՝ երկու վարժապէտ պահելու կարողութիւն չունենալու համար:

Գիղիս հիւսիսարևմտակողմ՝ երկու ժամու հեռաւորութեամբ, *Ուկան-Նահատակ* ուխտատեղին՝ Քոյր և եղրայր անուանեալ, կզտնուի գիղիս դրացի Թերմաչոռու անուն բրբարնակ գիղիս սահմանի մեջ:

Այստեղ տարին երեք անգամ, այսինքն՝ Յարութեան, Նոր կիրակէի և Վարդապատի տօներին, բացի գաւառիս հայ և բուրք բնակիչներէն, Տփխիստ և Նոր Բայազէտու վիճակներէն անգամ ուխտի կոյիմեն՝ գլխաւորապէս ամուլ կանայք: Այստեղ խարեւայ «ընկնաւոր» կանայք գուշակութիւններ կընեն՝ նախապէտ տեղեկութիւններ հաւաքելով ուխտաւորներէ, համախոն և շահու բաժանարորդակից իրեանց ընկերներու միջոցաւ: Երբ այս ու այն ուխտաւորաց ցաւ կիմանան, կսկսին յականէ յանուանէ այս ու այն ցաւագար անձինք կոչել՝ իրաքանչիրին ունեցած ցաւի անունն յայտնելով, որպէսզի իրենց գուշակութիւնն ստուգուի:

Եւ այսպէս՝ չարահնար միջոցներով պարզամիտ ժողովուրդը կիսելայելեն՝ նուերներ ստանալու:

Սոյն ուխտատեղին նախապէտ հայոց շինատեղի եղած է՝ Քուլանուղ անունով, որոյ մեջ կայ մի կամարաշէն և անսին եկեղեցի, որ մինչև ցայժմ անվնաս մնացած է: Յիշեալ եկեղեցւոյ հիւսիսային կողմը՝ պատճին կից, կայ մի մատուու ունենալով իր մեջ տապան՝ *Ուկան-Նահատակ* անունով<sup>151</sup>: Սոյն

149 Գտնվում է Շամխորի շրջկենտրոնից 15 կմ հարավ-արևմտուք (ծ. մ. բարձր է 1240-1360 մ):

150 Ըստ շինարարական արձանագրության՝ կառուցվել է 1872 թ. (Կարապետյան Ս., ճշկ. աշխ., էջ 515):

151 Վերանորոգել է Կարապետ Սաֆարյանը 1884-1885 թթ.

(Գառապար. Յով. Զարդախսուն և նրա պատճութիւնը, «Նոր-Նար», Թիֆլիս, 1889, № 197, 25 նոյեմբերի, էջ 3):



ՉԱՐԴԱԽՆԼՈՒ. Շուսկան Նահատակ վաճքը հյուսիս-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1980-ական թթ.)

մատուռին կից գանձակեցի Կարապետ Սափարեանցը երկու սենեակ շինած է ովհտաւորներուն բնակարան լինելու: Այդ ովհտատեղոյ տարեկան 70 րուրի փող գոյացեալ նուերներէն 20 րուրի Տըփիսիսու Ներսիսեան դպրանցին և 50 րուրի գիտիս վարժարանին յատկացուցեր է հոգ. իշխանութիւն:

Գիտիս սահմանի արևմտեան կողմը՝ 1 1/2 վերստ հեռաւորութեամբ, կայ մի ովհտատեղի՝ Կաղնախաչ անունով, որ կզունուի մի կենտ կաղնի ծառ՝ առանց ունենալու իր ներքի խաչ կամ օճախ: Կաղնի ծառ, երկու ճիւղաքներ ունենալով, խաչաձև կերկի, որ ևս սորա համար Կաղնախաչ անուն կկրէ:

Գիտիս արևելահարաւային կողմը՝ 2 վերստ հեռաւորութեամբ, մի բարձր բլուրի գլխին, կայ մի խաչ-ովհտատեղի՝ Բարձր-Խաչ<sup>152</sup> անունով, որ և Լուսաւորչայ-Խաչ անուն կկրէ: Հիսխակողմը՝ գիտ-

իս մօտ, կայ մի թեք կանգնած խաչ՝ Մատուռ անունով, շրջապատուած փոքրիկ պատով:

Գիտիս բնակիչ Դանիէլի անձի տանը կայ մի արկու՝ իբրու թէ Գետաշէնու աւագ Ս. Նշանի խորանէն բերուած, որուն տեղացիք, Աւագ Ս. Նշանի խոր անուանելով, ովհտի կերթան:

Նոյնպէս արևելահարաւ կողմ կայ մի հին շինատեղի՝ 1/2 ժամ հեռաւորութեամբ, որուն մէջ կայ յայտնի Եկեղեցատեղի՝ իր փլատակներով և գերեզմանցով, Կուճոր (փոքրիկ) Չարդախսու անունով:

Գիտիս հարաւակողմը՝ մի ժամու հեռաւորութեամբ, Չախր-Եօլ ասուած տեղին մի ծորի մէջ, կայ մի հին շինատեղի՝ իր Եկեղեցու փլատակներով և գերեզմանցով:

Գիտիս բնակիչ Մանասեանց տնէն, որտեղ մենք իիրասիրուած էինք, կայ մի համալսարանական ուսանող՝ Մօսկովյայի համալսարանը, և մի ուրիշը՝ Տիֆիսի գիմնազիոնը, իսկ այլ բնակիչներէն կան Գանձակու քաղաքական ուսումնարանի մէջ: Աւարտածներ կան Ներսիսեան դպրանցէն՝ 2, Տիֆիսու արհեստական ուսումնարանէն՝ 1, Վիրաբուժական ուսումնարանէն՝ 2, Պետերբուրգի գինուորական բժշկական ճեմարանէն՝ 1:

<sup>152</sup> Ովհտատեղին, որը գտնվում էր Չարդախսուից 1,5 կմ հարավ՝ Խաչի սեռ լեռան գազարին, «...Բարձր Խաչ կամ սորք Գեռզ անունով մի մեծ երկար քար» էր՝ «խաչով և որիշ նկարներով..., որի վրայ բացի բուականից՝ ՌՀՅ (1629), որիշ արձանագրութիւն չկայ» (նշվ. հոդվ., նույն տեղում: Տես նաև Կարսապետյան Ս., Հյուսիսային Արցախ, էջ 517-518):



**ԶԱՐԴԱԽՈՒԹ. Բարձր-խաչ խաչքարը (լուս.՝ անհայտ հեղինակի)**

Եկեղեցին ունի մի ձեռագիր անթուական Աւտարան:

## ԽՍ

### Սարով

Ի վերջոյ այցելեցինք Գանձակու հիսախակոյ-ման վրայ գտնուող 3 գիտեր, նախ՝ ի Սարով<sup>153</sup> գիտ, որ կրազկանայ 120 տուն բնակիչներէ, որոնց-մէ 93 տուն մահմեղական թուրքեր և հայեր՝ 35 տուն՝ 83 արական և 72 իգական: Վիճակիս մէջ այս գիտն է միայն, որ մահմեղականներու հետ խառն կրնակին: Հայերը 100 տարիի չափ առաջ 8 տուն գաղթեր են այստեղ Զիանջիրու գաւառի Սարով գիտէ:

Այս գիտը կգտնուի Գանձակու արևելահիս-սային կողմ՝ 3 ժամ հեռաւորութեամբ, և որի հողային կալուածքը կպատկանի գանձակեցի հանգուցեալ Սինաս-քէզ Կանսարականի ժառանգներուն: Գի-դարնակիշները իրենց արդինարերութենէն տասնէն մէկը հողավարձ կուտան կալուածատիրոց: Բնակիչ հայերը խաղաղասիրութեան և պարկեցուութեան

<sup>153</sup> Գտնվում է Կասում-Խսմայիլովի շրջենտրոնից 22 կմ արև-մտուք՝ Կուրակ գետի ձախ ափին (ծ. մ. բարձր է 240-250 մ):

տիպար ճանչցուած են մերձակայ գիտերէն: Հայեր ամէն բանի մէջ բաւականութիւն կզգան, բացի ջրէն, որ սակաւութիւն կրնէ, և դժողի են, որու համար զր-կուած կհամարեն ուժովներու ձեռքէն: Երկիրը սևա-հողէ և արգաւանդ ու բերքի պակասութիւն պատճա-ռուեր է ջրի պակասութեան համար:

Գիտի շուրջը զարդարուած է մասամբ պտղա-տու ծառերով և մեծ մասամբ բթենիներով, զի ունեն և շերամապահութիւն, որոյ արդինքից, այսինքն՝ շերամից կպատրաստեն գեղեցիկ ներկով և պինդ գործուածքով կապերտներ, որ կգործածուին սեղա-նի ծածկոցի, անկողիններու և բարձու երեսներու ու պատի գորգերու տեղ: Այս արհեստ տարածուած է այստեղ թէ՛ թուրքերու և թէ՛ հայերու իգական սեփի մէջ, որք կպատրաստեն թէ՛ իրենց պիտոյից համար և թէ՛ ի վաճառ կհանեն:

Հայեր ունեն մի փոքր, ցածր, փայտածածկ, ան-շուրք եկեղեցի՝ *Ս. Աստուածածին* անուամբ<sup>154</sup>:

Ունին մի տգետ քահանայ՝ տէր Սեսրովք Տէր-Յովիհաննիսեան անունով, որ դրացիական եզնա-կոյիներու պատճառաւ թողեր, լրեր է իր եկեղեցի և ժողովուրդ, գաղթեր է Զարգալար անուն գիտ: Գի-դարցոց հին սերնդի մէջ երկու ծեր տիրացուներ կգտնուին, իսկ նոր սերունդի մէջ ոչ մի փոխասաց պատրաստեր է քահանայն գեր իրեն ժամասացու-թեան օգնելու:

Գիտու ունի մի ուսանող Գանձակու արհեստա-տրաց ուսումնարանը:

Ի հնումն որթատունկ այգիներ ունեցեր են, բայց այժմ անհետացեր են:

Ծիրակ-չայի վերի կողմերը գիտերի շատնալու համար հետզհետև ջրեր պակսեր են: Սոցա կանանց սեղը ձմեռ ժամանակ զրադուած են մետաքս, բամբակ և բուրդ մանելով: Բացի մետաքսագործութենէ՝ գիտեն և բողից գործել գեղեցիկ գորգ և կապերտներ:

## ԽՄ

### Ղարադաղլու

Սարովէն մեկնելով՝ այցելեցինք ի գիտն Ղարա-դաղլո<sup>155</sup>, որուն թուրքեր և ոտսներ Խսան-քէն կա-նուանեն: Գիտը կգտնուի Գանձակու արևելակողդ՝ Ծիրակ չայի ձախ ափին՝ Գանձակէն երկու ժամ հեռաւորութեամբ, և կրազկանայ 86 տուն գուտ հայ բնակիշներէ՝ 189 արական, 174 իգական:

Ունի մի եկեղեցի՝ *Ս. Գէորգ* անուամբ, որ կառու-ցած է նոյն գիտացի հանգուցեալ Դանիէլեան Ռու-ստոմը 1851 թուականին<sup>156</sup>, անմահ յիշատակ իր

<sup>154</sup> Ավերգել է 1905 թ. (*Կարսագետյան Ս.*, նշվ. աշխ., էջ 433):

<sup>155</sup> Գտնվում է Կասում-Խսմայիլովի շրջենտրոնից 21 կմ հյուսիս-արևմուտք՝ Կուրակ գետի ձախ ափին (ծ. մ. բարձր է 330-360 մ):

<sup>156</sup> Ար. Գևորգ եկեղեցու շինարարական արձանագրութեան համաձայն՝ կառուցվել է 1855 թ. (*Քաջիկեան*, Շանսապար-հորդական յիշատակարան, «Արձագանք», 1886, № 19, էջ 280: Վրիրտկ.՝ *Բարխուտաբեան Ս.*, Արցախ, էջ 53; *Կարս-ագետյան Ս.*, Հյուսիսային Արցախ, էջ 429):

մահկանացութեան, զի ժառանգ չէ ունեցեր, ինչպէս կվկայէ նոյն եկեղեցոյ ատեանի մէջ նորա ամփոփուած գերեզմանի տապանագիրը: Ունի մի բարեհամբաւ քահանայ և երկու ապիկար տիրացուներ:

Ունի և մի վարժարան եկեղեցոյ արևելեան կողմը՝ շնուած 1874 թուականին: Երեք տարոյ չափ ունեցեր է ուսանողներ և այնուհետև խափանուեր է մինչև ցայսօր՝ տարիներու անպատճարելութեան համար:

Գիտը զարդարուած է պատղատու ծառաստաններով, որուն մէջ աւելի տեղ կրոնեն քրենիներու բազմութիւն շերամի համար, զիներեր որթատունկերու այգիներով: Ունի և բաւական վարելահող, որը ամէնն ալ կոռոգուին Քիրակչայի առաս ջրով, բայց ժողովուրդ դարձեալ աղքատ է: Պատճառը հարցուցի, անտնտեսագիտութի՞ւնն է արդեօր, զինենողութի՞ւնը, ծովութի՞ւնը: Ո՛չ, պատասխաննեցին, այլ հարկահանութեան ծանրութիւնը: Բայց որպէս ես նկատեցի, սոցա անյառաջադիմութիւն ծովութեան արդիւնք է, որովհետև սորս 1826 թուականին, որպէս զարթական ժողովուրդ, Պարսկաստանին եկած այստեղ և ծովութեան ժառանգական ախտը բերեր են հետերնին իրենց նոր հայրենիքը: Գալով սոքա այս երկիր՝ հեշտութեամբ չեն կարողացել ազատուել իին ունակութիւնն: Բայց ներկայիս, խոստովանել պարտ է, որ նոցա մէջ ևս արքնացել է յառաջադիմութեան ձգուում և ողին, զի նշաններն արդէն ցոյց կուտան և սկսեր են այգեգործական նշակութիւն, ամէն որ տնկեր է իրեն համար այզի, և կշինեն հետզհետէ կանոնաւոր կարգով տներ նոր ձևի:

Կիներու և տղաքներու պարզ հանդերձանքներն կերեկն մաքրութեան նշաններ: Տնատեղերն ընդարձակ, որովհետև դիրքը դաշտային է՝ համեմատութեամբ այլ գիտօրէից հետ, փողոցներ բաւական լայն և մաքուր են: Արդէն սկսեր են գեղեցիկ ճաշակով տներ շինել:

Գիտիս արևելակղում՝ Քիրակ-չայի ձախ ափին, գետածորի մէջ, կայ մի կաղնի խաչ՝ Մատուռ անունով ոխտատեղի՝ շրջապատուած 4 ցածր պատերով, որտեղ ոխտաւորներ խունկ, մոս կվառեն, ուր չկայ ո՛չ խաչ, և ո՛չ որիշ պաշտելի մի նշան: Որուն կիովանաւորեն մեծ կաղնի, փշատի և փոշնի հիմաւորց ծառեր, որք առ երկիրի պատժուելու՝ անձեռնմխելի մնացած են, ուստի և անոնցմէ քանիս գոսացած շորացած են, որոնց ճիւերու վրայ ոխտաւորներ կլապեն շորի կտրտամբներ՝ ցալի փարատելու համար:

Գիտէս երեք ուսանող ունին Գանձակու քաղաքական ուսումնարանի մէջ:

## ԽԾ Զարգալար<sup>157</sup>

Ապա այցելեցինք Ղարադաղլուէն 1/4 ժամաւ հետի Զարգալար գիտը, ըստ թուրքաց՝ Խոյլուզար, զի նորա բնակիչներ Խոյէն գաղթեր են այս գիտ, որ կրաղկանայ 40 տուն զուտ հայ բնակիչներէ՝ 89 արական, 83 իգական:

Ունի փայտածածկ մի անշոր եկեղեցի՝ *Ս. Աստուածածիկ անունով*<sup>158</sup>:

Սեպհական քահանայ չունենալու համար իրենց հոգևոր պէտքերը կմատակարարէ Ղարադաղլուի քահանայն:

Առաջին անգամն է, որ կհանդիպենք մի այնայիս գիտի, որոյ մէջ ո՛չ մի կարդալ գիտցող կայ: Չունի գիտէն դուրս որևիցէ մի վարժարանի մէջ ուսանող տղայ:

Այս գիտը կգտնուի Քիրակչայ գետի ձախ ափի վրայ՝ Ղարադաղլուէն երկու վերստ հեռու հարաւակողմ:

Ժողովուրդը երկրագործ է, բայց աղքատ, զի ուներ տունն, ինչպէս իրենք կասեն, երեք լուծ անսաւուններ ունի: Կրի անսաւուններ նոյնպէս սակաւ են: Սոքա ունեն բաւական վարելահողեր և առաս ջուր: Գիտը զարդարուած է պատղատու ծառաստաններով, փոքր մասն միայն կպարապի շերամապահութեամբ: Այգեգործութեան զաղափարը դեռ նոր է մուտք գործել սոցա մէջ՝ օրինակ վեր առնելով իրենց դրացի կալուսածատեաց պ.ա. Մէլիքեամցներէ և Արայեանցներէ, որք սոցա սահմանի մէջ տընկեր են մեծատարած այգիներ և զանազան մրգատու ծառեր: Ուստի և այս գիտացիք, հետևելով նոցա օրինակին, արդէն սկսեր են տնկել որթատունկ այգիներ: Յուսալի է, որ այստեղետև տնտեսագիտութեան շնորհի մի քանի տարիէն յետոյ կփարթանանայ այս ժողովուրդ:


Զարողներու ծարաւ այս ժողովուրդեան մի համառու բանախօսութեամբ խրախուսեցի զարգանալ տնտեսագիտութեան մէջ՝ ցոյց տալով ճանապարհը բնական օրինակներով և ի միջի այլոց յորդորեցի զանոնք քանդել իրենց կիսափուլ եկեղեցին, շինել նորը՝ ի հիմանց գեղեցիկը և վայելուը: Բարեպաշտ այդ ժողովուրդն յօժար կանօք ընդունեց մեր առաջարկութիւնը, իսկոյն եթե ընտրեցին իրանց նիշէն մի հոգաբարձութիւն՝ երեցինիս Սինաս Հախնազարեանց, Սօղոմօս Ալլահվերդեանց և Գրիգոր Յարութիւնեանց, որ հոգ տանեն եկեղեցոյ կառուցման գործին վերայ իմ խնամքով ու խորհրդով:

157 Գտնվում է Կաստմ-Խսմայիրովի շրջկենարոնից 22 կմ արևմտուր՝ Կուրակ գետի ձախ ափին (ծ. մ. բարձր է 375-410 մ):

158 Հավանաբար 1850-ական թթ. երկրորդ կեսի կառույց է: 1980-ական թթ. արդէն կիսավեր էր (**Կարապետյան Ս.**, 624, աշխ., էջ 425):

# ՀՃՈՒՀ ՆՈՐ

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Բնության և պատմության  
հուշարձաններով հարուստ  
Դայաստանի գողտրիկ  
անկյուններից են Խոսրովի  
արգելոցը և Նրան հարակից գոտին:  
Այս ուղեցույցը կարող է օգտակար  
լինել այն զրոսաշրջիկների համար,  
ովքեր ցանկություն ունեն  
ծանոթանալու արգելոցի բուսական,  
կենդանական աշխարհին,  
երկրաբանությանը և պատմական  
հուշարձաններին:



**«ԽՆՌԻՄ» հատորը լույս ընծայվեց  
Դայաստանում և Սփյուռքում  
հայագիտության և մշակույթի զարգացմանը  
մշտապես սատարած երջանկահիշատակ  
**Դարություն Միմոնյանի**  
(5 մայիս 1921, Այնքապ - 2 սեպտեմբեր 2007,  
ժենովիե, Ըվեյցարիա) մերձավորների  
սիրահոժար մեկենասությամբ:**

## ՇԱՄԱԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ

- «Save Armenian Monuments» կազմակերպությանը
  - «Թուֆենկյան» և «Ford» հիմնադրամներին
  - ՀՃՈՒՀ հոգաբարձուսերի խորհրդի անդամ  
**Մարգրիտ Դախնազարյանին**
  - ՀՃՈՒՀ բարեկամ Վահագև Նազարյանին
- ՀՃՈՒՀ հիմնադրամին աշակեցելու համար

